

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

«ՍԱԽԱԷԼ»

ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

---

Հաստատում եմ

«ՍԱԽԱԷԼ» ՍՊԸ

Տնօրեն Դ. Սահակյան

\_\_\_\_\_ Կ.Տ. \_\_\_\_\_ 2022թ.

ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳԻԺԳԵՏԻ ԵՐԵՎԱԿՄԱՆ ՀԻԴՐՈԹԵՐՄԱԼ ՓՈՓՈԽՎԱԾ  
ԱՊԱՐՆԵՐԻ ԳՈՏՈՒՄ ԵՐԿՐԱԲԱՆԱ-ՈՐՈՆՈՂԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ  
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ  
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Երևան 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	Էջ
ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ ԵՎ ՏԵՐՄԻՆՆԵՐ .....	3
1. ՆԱԽԱԳԾՄԱՆ ՆՈՐՄԱՏԻՎ-ԻՐԱՎԱԿԱՆ ՀԵՆՔԸ .....	5
2. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ .....	9
2.1. Գտնվելու վայրը .....	9
2.2. Տարածքի երկրաբանական կառուցվածքը .....	12
2.3. Նախատեսվող գործունեության բնութագիրը .....	14
3. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ .....	19
3.1 Ռելիեֆ, երկրաձևաբանություն .....	19
3.2 Արտածին երկրաբանական երևույթներ, սեյսմիկ բնութագիր .....	20
3.3 Կլիմայական բնութագրեր .....	24
3.4 Մթնոլորտային օդ .....	27
3.5 Ջրային ռեսուրսներ .....	28
3.6 Հողեր .....	31
3.7. Բուսական աշխարհ .....	33
3.8. Կենդանական աշխարհ .....	38
3.9. Բնության հատուկ պահպանվող տարածքներ .....	40
4. ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ .....	46
4.1. Ենթակառուցվածքներ .....	46
4.2. Հողերի տնտեսական յուրացման բնութագիր .....	51
4.3. Պատմության և մշակույթի հուշարձաններ .....	56
5. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ .....	59
6. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ .....	63
7. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԾՐԱԳԻՐ .....	68
8. ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐ .....	70
Օգտագործված գրականության ցանկ .....	71
Հավելված 1. ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության տեղեկանք սողանքային մարմինների վերաբերյալ .....	72
Հավելված 2. Տեղականք ՀՀ կադաստրի կոմիտեից .....	75

ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՄԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ ԵՎ ՏԵՐՄԻՆՆԵՐ

**Օգտակար հանածոյի պաշարներ՝** օգտակար հանածոյի կուտակումներ, որոնց ծավալը, քանակը, որակը և տարածքային դիրքն ու ձևը որոշված են.

**Ընդերքօգտագործում՝** երկրաբանական ուսումնասիրությունների, օգտակար հանածոների արդյունահանման նպատակներով ընդերքի օգտագործում կամ ընդերքօգտագործման թափոնների վերամշակում.

**Ընդերքօգտագործող՝** իրավաբանական անձ (այդ թվում՝ օտարերկրյա պետության առևտրային կազմակերպություն), որը, սույն օրենսգրքին համապատասխան, իրականացնում է ընդերքօգտագործում.

**Օգտակար հանածոյի երևակում՝** ընդերքի տեղամաս, որում հայտնաբերվել է օգտակար հանածոյի առկայություն, որի քանակը, որակը և արդյունաբերական նշանակությունը դեռ որոշված չեն.

**Օգտակար հանածոների արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության թույլտվություն՝** թույլտվություն, որն իրավունք է տալիս ընդերքի որոշակի տեղամասում իրականացնելու երկրաբանական ուսումնասիրություններ օգտակար հանածոների հայտնաբերման, հանքավայրի կամ հանքավայրի աշխարհագրորեն առանձնացված տեղամասի պաշարների վերագնահատման համար.

**Բույսերի կարմիր գիրք՝** միջազգային պահանջները բավարարող համահավաք փաստաթուղթ, որում գրանցվում են տեղեկություններ հազվագյուտ, անհետացման եզրին գտնվող բույսերի և համակեցությունների կարգավիճակի, աշխարհագրական տարածվածության, էկոլոգիական պայմանների, կենսաբանական առանձնահատկությունների ներկա վիճակի և պահպանման միջոցառումների մասին

**Կենդանիների Կարմիր գիրք՝** միջազգային պահանջները բավարարող համահավաք փաստաթուղթ է, որում գրանցվում են տեղեկություններ հազվագյուտ, անհետացող կենդանական տեսակների կարգավիճակի, աշխարհագրական տարածվածության, էկոլոգիական պայմանների, կենսաբանական առանձնահատկությունների, ներկա վիճակի և պահպանման միջոցառումների մասին: Կենդանիների Կարմիր գիրքը վարվում է հազվագյուտ և անհետացող կենդանական տեսակների և համակեցությունների հաշվառման, պահպանության, վերարտադրության, օգտագործման և գիտականորեն հիմնավորված հատուկ միջոցառումների մշակման և իրագործման, ինչպես նաև դրանց մասին բնակչությանը իրազեկելու նպատակով

**Հող`** երկրի մակերևույթում բիոտիկ, աբիոտիկ և մարդածին գործոնների երկարատև ազդեցության արդյունքում առաջացած ինքնուրույն բնագիտապատմական հանքաօրգանական բնական մարմին` կազմված կոշտ հանքային և օրգանական մասնիկներից, ջրից ու օդից և ունի բույսերի աճի ու զարգացման համար համապատասխան պայմաններ ստեղծող յուրահատուկ գենետիկամորֆոլոգիական հատկանիշներ ու հատկություններ

**Հողի բերրի շերտ`** հողային ծածկույթի վերին շերտի բուսահող, որն օգտագործվում է հողերի բարելավման, կանաչապատման, ռեկուլտիվացման նպատակներով

**Ռեկուլտիվացում`** խախտված հողերի վերականգնմանն ուղղված (օգտագործման համար պիտանի վիճակի բերելու) միջոցառումների համալիր, որը կատարվում է 2 փուլով` տեխնիկական և կենսաբանական

**Ազդակիր համայնք`** շրջակա միջավայրի վրա հիմնադրությամբ փաստաթղթի կամ նախատեսվող գործունեության հնարավոր ազդեցության ենթակա համայնքի (համայնքների) բնակչություն` ֆիզիկական և (կամ) իրավաբանական անձինք

**Խախտված հողեր`** առաջնային տնտեսական արժեքը կորցրած և շրջակա միջավայրի վրա բացասական ներգործության աղբյուր հանդիսացող հողեր

**Ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով մշտադիտարկումներ`** ընդերքի երկրաբանական ուսումնասիրության և օգտակար հանածոների արդյունահանման աշխատանքային ծրագրերին զուգընթաց` երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ծրագրով, օգտակար հանածոների արդյունահանման աշխատանքային նախագծով, շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտով և ազդեցության գնահատման հաշվետվությամբ ամրագրված ցուցանիշների հիման վրա իրականացվող մշտադիտարկումներ:

## 1. ՆԱԽԱԳԾՄԱՆ ՆՈՐՄԱՏԻՎ-ԻՐԱՎԱԿԱՆ ՀԵՆՔԸ

Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հիմնական հաշվետվությունը կազմելիս ընկերությունն առաջնորդվել է բնապահպանական օրենսդրության պահանջներով, որոնք ամրագրված են հետևյալ իրավական ակտերում.

– ՀՀ Ընդերքի մասին օրենսգիրք (ՀՕ-280, 28.11.2011թ.), որով սահմանվում են ՀՀ տարածքում ընդերքօգտագործման սկզբունքներն ու կարգը, կարգավորվում են ընդերքն օգտագործելիս բնությունը և շրջակա միջավայրը վնասակար ազդեցություններից պաշտպանության, աշխատանքների կատարման անվտանգության ապահովման, ինչպես նաև ընդերքօգտագործման ընթացքում պետության և անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանության հետ կապված հարաբերությունները:

– ՀՀ Հողային օրենսգիրք (ՀՕ-185, 02.05.2001թ.), որը սահմանում է հողային հարաբերությունների պետական կարգավորման կատարելագործման, հողի տնտեսավարման տարբեր կազմակերպական-իրավական ձևերի զարգացման, հողերի բերրիության, հողօգտագործման արդյունավետության բարձրացման, մարդկանց կյանքի ու առողջության համար բարենպաստ շրջակա միջավայրի պահպանման և բարելավման, հողի նկատմամբ իրավունքների պաշտպանության իրավական հիմքերը:

– ՀՀ Ջրային օրենսգիրք (ՀՕ-373, 04.06.2002թ.), որով կարգավորվում են ջրային ռեսուրսների և ջրային համակարգերի, այդ թվում՝ ջրամատակարարման, ջրահեռացման համակարգերի տնօրինման, տիրապետման, օգտագործման և պահպանման ոլորտում ծագող հարաբերությունները:

– «Բուսական աշխարհի մասին» ՀՀ օրենք (ՀՕ-22, 23.11.1999թ.), որը սահմանում է պետական քաղաքականությունը բնական բուսական աշխարհի գիտականորեն հիմնավորված պահպանության, պաշտպանության, օգտագործման և վերարտադրության բնագավառում:

– «Կենդանական աշխարհի մասին» ՀՀ օրենք (ՀՕ-52, 03.04.2000թ.), որը սահմանում է ՀՀ տարածքում կենդանական աշխարհի վայրի տեսակների պահպանության, պաշտպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքականությունը:

- «Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենք (ՀՕ-121, 11.10.1994թ.), որի առարկան մթնոլորտային օդի մաքրության ապահովման, մթնոլորտային օդի վրա վնասակար ներգործությունների նվազեցման ու կանխման բնագավառում հասարակական հարաբերությունների կարգավորումն է:
- «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենք (ՀՕ-211, 27.11.2006թ.), որը կարգավորում է Հայաստանի Հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքների՝ որպես բնապահպանական, տնտեսական, սոցիալական, գիտական, կրթական, պատմամշակութային, գեղագիտական, առողջապահական, ռեկրեացիոն արժեք ներկայացնող էկոհամակարգերի, բնության համալիրների ու առանձին օբյեկտների բնականոն զարգացման, վերականգնման, պահպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքականության իրավական հիմունքները:
- «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենք (ՀՕ-110, 21.06.2014թ.), որը կարգավորում է Հայաստանի Հանրապետությունում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումների, շրջակա միջավայրի վրա ազդեցության պետական փորձաքննության ոլորտի հասարակական հարաբերությունները:
- «Թափոնների մասին» 24.11.2004թ.-ի № ՀՕ-159-Ն օրենք, որը կարգավորում է թափոնների հավաքման, փոխադրման, պահման, մշակման, օգտահանման, հեռացման, ծավալների կրճատման և դրանց հետ կապված այլ հարաբերությունների, ինչպես նաև մարդու առողջության և շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելման իրավական և տնտեսական հիմքերը:
- ՀՀ կառավարության 14.12.2017թ.-ի թիվ 1643-Ն որոշում, որը կիրառվում է Հայաստանի Հանրապետության տարածքում խախտված հողերի հաշվառման, հողաշինարարական, քարտեզագրման, կանխատեսվող ու իրականացման ենթակա ռեկուլտիվացման աշխատանքների նախագծման, ռեկուլտիվացման, ռեկուլտիվացված հողերի նպատակային նշանակության ուղղությունների որոշման, ինչպես նաև նպատակային ու գործառական նշանակությանը համապատասխան՝ դրանց հետագա օգտագործման ժամանակ:
- ՀՀ կառավարության 31.07.2014թ.-ի N781-Ն որոշում, որը սահմանում է Հայաստանի Հանրապետության բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և

բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման ընթացակարգը:

– ՀՀ կառավարության 22.02.2018թ.-ի N191-Ն որոշում, որը սահմանում է ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով պլանավորվող մշտադիտարկումների իրականացման պահանջների, ինչպես նաև արդյունքների վերաբերյալ հաշվետվությունները ներկայացնելու կարգը:

– ՀՀ կառավարության 02.11.2017թ.-ի N1404-Ն որոշում, որով սահմանվել են հողի բերրի շերտի հանման նորմերի որոշմանը և պակաս արդյունավետ հողերի բարելավման համար հողի բերրի շերտի պահպանմանն ու օգտագործմանը ներկայացվող պահանջները:

– ՀՀ կառավարության 29.01.2010թ.-ի N71-Ն որոշում, որով հաստատվել է ՀՀ կենդանիների Կարմիր գիրքը,

– ՀՀ կառավարության 29.01.2010թ.-ի N72-Ն որոշում, որով հաստատվել է ՀՀ բույսերի Կարմիր գիրքը,

– ՀՀ կառավարության 14.08.2008թ.-ի N967-Ն որոշում, որով հաստատվել է ՀՀ բնության հուշարձանների ցանկը:

– ՀՀ կառավարության 15.06.2017թ.-ի N676-Ն որոշում, որով հաստատվել են ընդերքօգտագործման թափոնների կառավարման և վերամշակման պլանների օրինակելի ձևերը:

– ՀՀ կառավարության 18.08.2021թ.-ի N1352-Ն որոշում, որով կարգավորվում են Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքի 69-րդ հոդվածով սահմանված շրջակա միջավայրի պահպանության դրամագլխին Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված ընդերքօգտագործողների կողմից Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքի 3-րդ հոդվածով սահմանված ռեկուլտիվացիոն աշխատանքների՝ նախահաշվային արժեքների հաշվարկման և վերահաշվարկման կարգի հետ կապված իրավահարաբերությունները:

– ՀՀ կառավարության 08.09.2011թ.-ի N°1396-Ն որոշում, որով սահմանվում են Հայաստանի Հանրապետության տարածքում հողի բերրի շերտի նպատակային և արդյունավետ օգտագործման հետ կապված հարաբերությունները:

– ՀՀ կառավարության 21.10.2021թ.-ի N1733-Ն որոշում, որով կարգավորվում են Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքի 69-րդ հոդվածով սահմանված՝ շրջակա միջավայրի պահպանության դրամագլխի օգտագործման և հատկացումների չափերի հաշվարկման հետ կապված հարաբերությունները:

– ՀՀ կառավարության 20.01.2005թ.-ի N64-Ն որոշում, որով հաստատվել են ջրակնոհամակարգերի սանիտարական պահպանման, հոսքի ձևավորման, ստորերկրյա ջրերի պահպանման, ջրապահպան, էկոտոնի և անօտարելի գոտիների տարածքների սահմանման չափորոշիչները:

– ՀՀ կառավարության 27.05.2015թ.-ի N764-Ն որոշում, որով հաստատվել է շրջակա միջավայրի վրա հնարավոր տնտեսական վնասի գնահատման և հատուցման կարգը:

– ՀՀ առողջապահության նախարարի 06.03.2002թ.-ի N138 հրաման, որով հաստատվում են աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում աղմուկի սանիտարական նորմերը:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասի՝ նախատեսվող գործունեության՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտում պետք է ներկայացվեն՝

1) ձեռնարկողի անունը (անվանումը) և բնակության (գտնվելու) վայրը.

2) հիմնադրության փաստաթղթի և (կամ) նախատեսվող գործունեության անվանումը և նպատակը.

3) հիմնադրության փաստաթղթի և (կամ) նախատեսվող գործունեության ենթակա տարածքի, այդ թվում՝ շրջակա միջավայրի համառոտ նկարագիրը և իրադրության սխեման.

4) հիմնադրության փաստաթղթի և (կամ) նախատեսվող գործունեության բնութագիրը (արտադրական հզորություններ, օգտագործվող բնառեսուրսներ և նյութեր, տեխնիկական և տեխնոլոգիական լուծումներ).

5) շրջակա միջավայրի վնասակար ազդեցության բացառմանը, նվազեցմանն ու փոխհատուցմանն ուղղված բնապահպանական միջոցառումների ծրագիրը.

6) տեղեկատվություն հանրության ծանուցման, հանրային լուսման և տեղական ինքնակառավարման մարմինների նախնական համաձայնության վերաբերյալ, եթե օրենսդրությամբ այլ բան նախատեսված չէ:



## 2. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

### 2.1. Գտնվելու վայրը

Գիծգետի երևակյան հիդրոթերմալ փոփոխված ապարների գոտին գտնվում է Միսիան գետի ավազանում (Գիծգետ գետի վերին հոսանք), Միսիան խոշորացված համայնքի Արևիս գյուղից մոտ 3կմ հեռավորության վրա ուղիղ գծով և մոտ 12կմ ճանապարհով (նկար 1-3):

Երկրաբանա-որոնողական աշխատանքների իրականացման նպատակով հայցվող տարածքը կազմ է 12կմ<sup>2</sup>: Աշխատանքային տարածքը եզրագծված է գործող միասնական ARM WGS-84 կոորդինատային համակարգում հետևյալ կոորդինատներով:

	X	Y
1	8575900	4358992
2	8577400	4360992
3	8581567	4360992
4	8589000	4357992

Վարչատարածքային բաժանման տեսակետից երևակյան տարածքը ներառված է ՀՀ Սյունիքի մարզի Միսիան խոշորացված համայնքում (Թասիկ, Բնունիս, Նժդեհ գյուղեր):

Հայցվող տարածքի և Արևիս գյուղի մոտակա բնակելի շինությունների միջև հեռավորությունը կազմում է 3կմ, մինչև Տորունիք բնակավայրը՝ 7.1կմ, մինչև Նժդեհ բնակավայրը՝ 3.8կմ: ՀՀ պետական սահմանը գտնվում է հայցվող տարածքի հարավային եզրից 2.4-3.3կմ հեռավորությունների վրա:

Սյունիքի մարզը ընդհանուր առմամբ հայտնի է զարգացած լեռնահանքային արդյունաբե-րությամբ: Մարզում գործող լեռնահանքային ձեռնարկություններից են Զանգեզուրի և Ագարակի պղնձամոլիբդենային, Շահումյանի ոսկի-բազմամետաղային կոմբինատներ-ը: Այստեղ են գտնվում նաև Լիճքվազ-Թեյի, Տերտերեսարի ոսկու հանքավայրերը, որոնց պաշարները հաստատվել և վերահաստատվել են ինչպես նախկին ԽՍՀՄ ՊՊՀ-ի, այնպես էլ ՀՀ ՕՀՊԳ-ի կողմից:

Շրջանը հարուստ է տարատեսակ շինարարական նյութերով, հիմնականում բազալտներով և անդեզիտաբազալտներով, հրաբխային խարամներով, ավազներով և այլն:

# ՄՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ SYUNIK MARZ

Մարզկենտրոնը ԿԱՊԱՆ  
7 քաղաք, 131 բնակավայր  
Մարզային նշանակության  
ճանապարհների երկարությունը՝ 547կմ



KAPAN the center  
7 cities 131 settlements  
Instate roads 547km

◆ Գիծգետի երևակում


Նկար 1. Մյունիքի մարզի արտամասշխատարային քարտեզ




## ԻՐԱՎԻՃԱԿԱՅԻՆ ՍԽԵՄԱՏԻԿ ՀԱՏԱԿԱԳԻԾ

(Արտագծված է 1:25000 մասշտաբի J-38-20-1-ր թերթից)

Կոորդինատային համակարգը  
WGS-84 (ARMREF 02)



Նկար 2.



Նկար 3.

Շրջանը ապահովված է էլեկտրաէներգիայով, բոլոր բնակավայրերը էլեկտրաֆիկացված են: Տարածաշրջանում առկա են Սպանդարյանի, Տոլորսի, Շամբի և Բալաքի ջրամբարները, որոնց հենքի վրա կառուցվել են Շամբի, Շաքիի և Սպանդարյանի ՀԷԿ-երը:

Մարզում առկա է բավականաչափ ազատ աշխատուժ:

## **2.2. Տարածքի երկրաբանական կառուցվածքը**

Տարածքը ուսումնասիրվել է տարբեր ժամանակահատվածներում և տարբեր աստիճանի: Առաջին լուրջ աշխատանքները կատարել է Գ.Աբիխը, ում աշխատանքները կրում էին ռեգիոնալ բնույթ և նպատակ ունեին տալ «Հայկական բարձրավանդակի» երկրաբանական կառուցվածքի լուսաբանումը:

1937թ. Վ.Ն.Կոտլյարի կողմից կատարվել է 1:210000 մասշտաբի երկրաբանական հանույթ, որի նպատակն էր ուսումնասիրել հանքայնացման բնութագիրը և ինտրուզիաների ձևը Սիսիանի և Դարալագյազի (Վայք) շրջաններում:

1938թ. երկրաբան Ս.Ն.Սալովկինը ավարտեց շրջանի քարտեզագրումը 1:200000 մասշտաբով: Սոլովկինի աշխատանքներում տեղ են գտել Մարջանում և Արևիսում տարածված ապարների և հանքերնակումների նկարագրություն (բազմամետաղային, պղինձ-մոլիբդենային):

Ուսումնասիրվող շրջանի համար բավականին արժեքավոր էր Գ.Մաղաքյանի կողմից մետաղաձնությանը նվիրված աշխատանքները, որոնք կատարվեցին 1945-1946թթ.: Այդ ընթացքում կատարվեցին հանքերնակումների ուսումնասիրությունները և շլիխային հանույթ Դարալագյազի և Սիսիանի շրջանում: Շլիխային անալիզները ակնառու էին Գիժգետ գետի, Կամրջակի, Սալվարդ գետի, Այրի գետի և Շնաթաղ գետի հովիտներում: Այդ աշխատանքների արդյունքում ի հայտ բերվեցին մի շարք գրանիտոիդային ինտրուզիաներ, որոնց կոնտակտային մասերում հայտնաբերվեցին բազմամետաղային և պղինձ-մոլիբդենային հանքայնացումներ (Դաստակերտ, Արևիս):

1949թ. Պ.Լ.Եփրեմյանի կողմից կատարվել է 1:50000 մասշտաբի քարտեզահանում, ինչպես նաև Մարջանի, Արևիսի և Մազմազակի հանքերնակումների վերաստուգում:

1967-1970թթ. Միսիանի երկրաբանական խումբը որոնողական աշխատանքներ կատարեց Բարգուշատի լեռնաշղթայի հյուսիսային լանջին: Ռ.Ռ.Շահբազյանը այդ աշխատանքների ընթացքում հայտնաբերեց Գիժգետի հիդրոթերմալ փոփոխված ապարների գոտին, որտեղ նշվում է պիրիտի երակիկա-ցանավոր հանքայնացում և խալկոպիրիտի առկայություն:

1986-1987թթ. Մոսկվայի երկրաբանա-հետախուզական ինստիտուտի աշխատակիցները դոկտոր Ուսպենսկայի ղեկավարությամբ կազմեցին Ջանգեզուրի լեռնաշղթայի 1:50000 մասշտաբի երկրաբանական և հանքաբեռնավորվածության քարտեզները, որտեղ երևում է Գիժգետ գետի երկայնքով տարբեր միներալների առկայությունը:

Գիժգետի տեղամասի երկրաբանական կառուցվածքում մասնակցում են միջին-վերին էոցենի պլազիոկլազային, եղջերաքարային, նշաքարային բազալտները, որոնք կազմում են կապուտջուղի հաստվածքը: Այնուհետև գալիս են ստորին-միջին պլիոցենի դոլորիտները, անդեզիտները, կլինոպիրոքսենային բազալտները և անդեզիտները 200 մ հզորությամբ, որոնք տրանսգրեսիվ ծածկում են նախորդ հաստվածքին: Սրանց հաղորդում են դոլորիտները, անդեզիտները, անդեզիտոբազալտները, անդեզիտները և դացիտները 300մ ընդհանուր հզորությամբ (Մավարդի հաստվածք):

Հանքներփակող ապարները հանդիսանում են Կապուտջուղի կոմպլեքսի ապարները, որտեղ առանձնացնում են երեք փուլեր՝ քվարց-կարբոնատ-էպիդոտային, քվարց կարբոնատ-քլորիտային և քվարց-կարբոնատ-ակտինոլիտային:

Վերջիններս կապված են հանքներփակող ապարների հետ: Նրանք ունեն հրաբխային ծագում: Ապարները հիդրոթերմալ փոփոխված են, ներկայացված քվարց-սերիցիտային և քվարց կարբոնատային ֆացիայով: Համաձայն Ռ.Ռ.Շահբազյանի հանքամերձ մետասոմատիտները ձգվում են երկայնակիին մոտ ուղղությամբ: Նրանք սկսվում են Վարդանի գյուղից, շարունակցում հատում են Գիժգետ գետի և ձախ ափում աստիճանաբար ընկղմվում են անդեզիտների տակ:

Տեղամասում առանձնացվում են պիրիտային և պիրիտ-խալկոպիրիտային հանքայնացում, որոնց հետ ենթադրվում ոսկու հանքայնացում: Երակային միներալներից հանդիպում են քվարց, կարբոնատ, հաճախ բարիտ: Կարբոնատը

ցեմենտացնում է քվարցը և հանքային միներալները: Պիրիտը բնորոշվում է նուրբ հատիկավոր ստրուկտուրայով, ինչպես նաև դարսատիպ վերաբյուրեղացմամբ: Հանդիպում է նաև մալախիտ: Շրջանում լայն տարածում ունեն ինտրուզիվ ապարները: Տեղամասից հյուսիս տեղադրված են Արևիսի և Գոշաքարի գրանոդիորիտները, դեպի արևելք Վարդանի (Սոֆուլու) գրանոդիորիտները: Հյուսիս-արևմուտքում հայտնի են Մազմազակի քվարցային դիորիտները և քվարցային մոնցոնիտները:

Այս ինտրուզիաները պատռում են էոցեն հասակի տուֆֆիտներին, պորֆիրիտներին և նրանց տուֆերին: Կ.Ն.Պաֆֆենհոլցը և Վ.Ն.Կոտլյարը այս ինտրուզիաներին տալիս են միոցենի հասակ: Տարածքում լայն տարածում ունեն տեկտոնական խախտումները: Հայտնի են Դեբակլիի և Սալվարդ-Վարդենիսի ռեգիոնալ խախտումները և Կամրջակի խախտումը: Հարկ է նշել, որ Գիժգետի հարևանությամբ հայտնի են Մարջանի, Մազմազակի և Արևիսի հանքերակույմները: Սրանք բոլորը գտնվում են Դեբակլիի խախտման կախված կողում: Դեբակլիի խախտումը հանդիսանում է վերահսկող ստրուկտուրա:

Այս խախտումները լցված են էոցենի հասակի կոտրատված բրեկչայացած պորֆիրիտներով և տուֆերով, որը գալիս է փաստելու, որ այս խախտումները միոցենի հասակի են:

### ***2.3. Նախատեսվող գործունեության բնութագիրը***

#### *Որոնողական աշխատանքների մեթոդիկան և ծավալները*

Նախատեսվում է 1200 հա-ի վրա 1:10000 մասշտաբի երկրաբանական քարտեզահանում: Պրոֆիլները նախատեսվում է անցնել հյուսիս հարավ ուղղությամբ, որպեսզի ըստ հզորության ուսումնասիրենք հիդրոթերմալ փոփոխված ապարները: Պրոֆիլների միջև հեռավորությունը ընդունվելու է 100մ, դիտարկման կետերի հեռավորությունը 50մ: Նախատեսվում է վիզուալ միմյանցից տարբերվող ապարներից վերցնել խոշորաբեկոր նմուշներ անշլիֆներ պատրաստելու համար:

#### *Երկրաֆիզիկա*

Երկրաֆիզիկական աշխատանքները նախատեսվում է 200 հա-ի վրա: Նախատեսվում է մագնիտոհետախուզություն և հարուցված բևեռացման մեթոդով էլեկտրոհետախուզում: Պրոֆիլների միջև հեռավորությունը ընտրվելու է 100մ, իսկ

չափման կետերի միջև հեռավորությունը՝ 20մ: Դա հնարավորություն կտա 140-150մ խորության վրա ի հայտ բերել անոմալիաները: Պրոֆիլները նախատեսվում է անցկացնել հյուսիս-հարավ ուղղությամբ:

*Հետախուզաառուների անցում*

Նախատեսվում է անցնել թվով յոթ հետախուզաառու, յուրաքանչյուրի երկարությունը 60գծ/մ: Քանի որ պայթեցման աշխատանքներ չեն կատարվելու, փորվածքների խորությունը ընդունում ենք 1մ, իսկ լայնությունը՝ 0,8 մ:

Ընդամենը հետախուզաառուները՝

$$7 \times 60\text{մ} = 420 \text{ գծ.մ}$$

$$420\text{մ} \times 1.0\text{մ} \times 0.8\text{մ} = 336\text{մ}^3$$

*Նմուշարկում*

Հետախուզաառուների ընդհանուր երկարությունը 420գծ.մ է: Նախատեսվում է ակոսային նմուշարկում: Նմուշների քանակը 4 լին՝ 420, քանի որ նախատեսվում է ակոսային նմուշի երկարությունը ընդունել 1մ:

*Լաբորատոր աշխատանքներ*

Փորվածքների նմուշարկումից հետո նմուշները պարբերաբար ուղարկվելու են լաբորատոր ուսումնասիրությունների դրանց քիմիական և միներալային կազմը պարզելու համար: Մենք նախապես ծրագրավորել ենք, որ նմուշները ենթարկել ատոմային-աբսորբցիոն (ատոմային կլանման վերլուծություն) մեթոդով ուսումնասիրությունների, որպիսզի ոսկուն ուղեկցող էլեմենտներ ի հայտ բերել:

*Անձնակազմի տեղափոխում*

Անձնակազմի տեղափոխումը կատարվելու է ՄԱՅ 3303 մակնիշի ավտոմեքենայով, որի վառելիքի ծախսը կազմում է 16 լիտր բենզին՝ 100 կմ-ի համար: Մեքենայի օրեկան վազքը կազմում է 30կմ, ամսեկան վազքը՝ 660կմ: 1 ամսվա վառելիքի ծախսը կազմում է  $660:100 \times 16 = 105,6$ լ: Քանի որ, ելնելով բնակլիմայական պայմաններից, աշխատանքների կատարման ժամանակացույցից, դաշտային աշխատանքների տևողությունը կազմում է մոտ 1,6 տարի (18 տարի), անձնակազմի տեղափոխման համար վառելիքի ծախսը կկազմի  $105,6 \text{ ր} \times 18 \text{ ամիս} \approx 2000$ լ բենզին:

*Հողերի ռեկուլտիվացիա*

Հետախուզաառուների ընդհանուր երկարությունը կազմում է 420 գծ.մ:

Ռեկուլտիվացիայի ծավալը կկազմի՝

$$420 \text{ մ} \times 0,8 \text{ մ} = 336 \text{ մ}^2$$

Ռեկուլտիվացիայի ծավալը կկազմի՝

$$420 \text{ մ} \times 1.0 \text{ մ} \times 0,8 \text{ մ} = 336 \text{ մ}^3$$

Նախատեսվում է ռեկուլտիվացիան իրականացնել աստիճանաբար: Յուրաքանչյուր հետախուզաատվի նմուշարկումից հետո կատարվելու է լցածածկում ճմապատման ուղեկցությամբ:

*Հաշվետվության կազմում*

Սույն ծրագրով նախատեսված երկրաբանա-հետախուզական աշխատանքները ավարտելուց հետո, աշխատանոցային աշխատանքների ժամանակ կատարել ամբողջ փաստացի նյութերի ընդհանրացում և համակարգում: Դրանց արդյունքներով կկազմվի երկրաբանական հաշվետվություն:

Յուրաքանչյուր տարի Ընդերքի օրենքի պահանջին համաձայն կազմվի միջանկյալ հաշվետվություն կատարված աշխատանքների և արդյունքների մասին:

Երկրաբանական հաշվետվությունը կներկայացվի ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցների նախարարության «Հանրապետական երկրաբանական ֆոնդեր» ՊՈԱԿ:

*Աշխատանքները, անվտանգության տեխնիկայի ապահովումը*

Երկրաբանաորոնողական աշխատանքները կկատարվեն ՀՀ Աշխատանքային օրենսդրության պահանջների, երկրաբանաորոնողական աշխատանքների նորմատիվային փաստաթղթերի և այլն նորմատիվային ակտերին համապատասխան:

Սույն ծրագիրը նախատեսում է բոլոր տեսակի երկրաբանական աշխատանքների անվտանգ կատարումը:

Ձեռնարկության ադմինիստրացիան պարտավոր է՝

- Կատարել պլանային աշխատանքներ ուղղված արտադրական տրավմատիզմի նվազեցմանը, ժամանակին՝ ոչ ուշ, քան երեք ամիսը մեկ աշխատակիցների հետ անցկացնել հրահանգավորում անվտանգության տեխնիկայի գծով:

- Աշխատանքի ընդունվող բոլոր աշխատակիցների հետ անցկացնել նախնական ուսուցում անվտանգության կանոնների մասին:

- Բոլոր մասնագիտությունների գծով աշխատողներին ապահովել



աշխատանքների անվտանգ կատարման հրահանգներով:

- Բանվորներին ապահովել բանվորական արտահագուստով և անհատական պաշտպանիչ միջոցներով՝ սաղավարդ, ակնոցներ, ապահովիչ գոտիներ, ինքնափրկիչ, լամպ և այլն:

- Լեռնային և տրանսպորտային մեքենաների և մեխանիզմների ղեկավարումը թույլատրել այն անձանց, ովքեր անցել են հատուկ ուսուցում և ունեն այդ մեխանիզմները կամ մեքենաները ղեկավարելու իրավունքի վկայական:

Աշխատանքները կնորմավորվեն ամսեկան միջինը 22 աշխատանքային օրով (176 ժամ), կկիրռավի հերթափոխային կարգ:

*Տեխնիկատնտեսական հաշվարկներ*

Մինչև ծրագրա-նախագծային հաշվարկների կազմումը անհրաժեշտ է ծանոթանալ ֆոնդային նյութերին, ինչպես նաև գործող հրահանգներին:

Կատարողների ծախսը կազմում է՝

- Խմբի պետ - 1 հաստիք 1 ամիս
- Երկրաբան - 1 հաստիք 0,5 ամիս
- Գլխավոր երկրաբան - 1 հաստիք 0,5 ամիս

Ընդամենը - 3 հաստիք 2 ամիս

Ծրագրի կազմում՝

- Խմբի պետ - 1 հաստիք 0,5 ամիս
- Գլխավոր երկրաբան - 1 հաստիք 0,5 ամիս
- Օպերատոր - 1 հաստիք 0,5 ամիս
- Տնտեսագետ - 1 հաստիք 0,5 ամիս

Ընդամենը - 4 հաստիք 2 ամիս

*Աշխատանքների կազմակերպում և լուծարում*

Համաձայն «Հրահանգ երկրաբանահետախուզական աշխատանքների նախագծերի և նախահաշիվների կազմման» պահանջներին, աշխատանքների կազմակերպման ծախսերը կազմում են դաշտային աշխատանքների արժեքի 1%-ը:

Դաշտային աշխատանքներից հետո նախատեսվում են լուծարման աշխատանքներ, որոնց արժեքը կազմում է դաշտային աշխատանքների 0,8%-ը:

### *Աշխատանոցային աշխատանքներ*

Դաշտային աշխատանքների ընթացքում, ինչպես նաև աշխատանքների ավարտից հետո լաբորատոր ուսումնասիրությունների դրական արդյունքի դեպքում նախատեսվում է կատարել աշխատանոցային աշխատանքներ, երկրաբանական հաշվետվության կազմում, որը կներկայացվի ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցյցների նախարարության "Հանրապետական երկրաբանական ֆոնդ" ՊՈԱԿ:

Նշված աշխատանքների համար պետք է՝

- Խմբի ղեկավար - 1 մարդ - 1 ամիս
  - Գլխավոր երկրաբան - 1 մարդ - 1 ամիս
  - Երկրաբան - 1 մարդ - 0,5 ամիս
  - Օպերատոր - 1 մարդ - 0,5 ամիս
- Ընդամենը - 3 ամիս

### 3. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

#### 3.1. Ռելիեֆ, երկրաձևաբանություն

Գիծգետի երևակման շրջանի հիմնական լեռնաձևաբանական միավորներն են Զանգեզուրի և Բարգուշատի լեռնաշղթաները:

Զանգեզուրի լեռները ձգվում է միջօրեականի ուղղությամբ մոտ 130 կմ՝ Ամուլսար լեռնազանգվածից մինչև Արաքսի հովիտը: Առանցքային մասը դեպի հարավ աստիճանաբար բարձրանում է և Կապուտջուղ լեռնագագաթում հասնում իր առավելագույն բարձրության (3904 մ): Կատարային գոտին քիչ է մասնատված: Առավել բարձր լեռնագագաթներն են՝ Նահապետ (3510 մ), Երնջակ (3364 մ), Շահապոնք (3204 մ), Սարվարդ (3162 մ), Գողթան (3143 մ), Այրիսար (3132 մ), Միսկատար (3093 մ) և այլն: Լեռների հյուսիսային մասը համեմատաբար ցածր է (միջին բարձրությունը մոտ 2800 մ), լեռնանցքները (Որոտանի (2344 մ), Միսիանի (2345 մ))՝ դյուրանցանելի, մինչև Այրիսար գոգածալքային հիմքի վրա ձևավորվել է անհամաչափ լանջերով ծալքաբեկորավոր, էրոզային տեղատարումային, Այրիսար, Սարվարդ հատվածում՝ «շրջված» ռելիեֆ: Արևելյան լանջերն աստիճանակերպ իջնում են դեպի Որոտանի հովիտ և կտրտված են Շաղատի վտակների հովիտներով: Արևմտյան լանջերը խիստ մասնատված են Նախիջևանի և Երնջակի ու դրանց վտակների խոր, գառիթափ ձորերով, որոնց միջև պահպանված են համեմատաբար ցածրադիր (2200-2400 մ) լեռաձյուղեր:

Լեռնաշղթայի հարավային մասը նորագույն տեկտոնական շարժումների հետևանքով բարձրացած հորստ է՝ կազմված Մեղրու պլուտոնի գրանիտոիդներից: Այստեղ ծալքավորված էոցենի նստվածքահրաբխածին շերտախմբի ու խոշոր ներժայթուք զանգվածի վրա ձևավորվել է ծալքաբեկորավոր, էրոզային տեղատարումային ռելիեֆ: Հարավային կեսի կենտրոնական հատվածն ունի ալպյան տիպի սրածայր, ատամնավոր գագաթներ (Կապուտջուղ, Միսկատար, Փառական, Նահապետ, Երնջակ և այլն):

Լեռնանցքները (3400-3600 մ բարձրություն) հազվադեպ են, դժվարանցանելի:

Բարձրլեռնային գոտուն բնորոշ են ռելիեֆի ձևասառցադաշտային ձևերը: Մեղրի, Ողջի, Քաջարանց, Գեղի և այլ գետերի ակունքներում կան պլեյստոցենյան սառցապատումների հետքեր՝ կառեր ու սառցադաշտային հովիտներ, որոնց մի մասը

լցվել է ջրով, առաջացել են լճեր (Ղազանի, Կապույտ, Կապուտան, Քաջարանց և այլն):  
Հանդիպում են ձնաբծեր: Հարավային լանջերը զառիթափ են, ժայռոտ ու մասնատված  
Արաքսի վտակներով: Կատարային մասում հին սառցադաշտային ձևերի հետ  
միաժամանակ մեծ չափերի են հասնում սառնամանիքային հողմահարումը,  
ծանրահակ ու էրոզային երևույթները:

Զանգեզուրի լեռնաշղթայի և Ղարաբաղի բարձրավանդակի միջև հյուսիս-  
արևմուտքից հարավ-արևելք ձգվում է Որոտանի միջլեռնային իջվածքը՝ Ակնադաշտի,  
Շաղաթի (Անգեղակոթի), Սիսիանի, Շամբի գոգհովիտներով և Որոտանի՝ մինչև 900 մ  
խորությամբ կիրճով:

Բարգուշատի ծալքաբեկորավոր լեռնաշղթան, Զանգեզուրի լեռների արևելյան  
ճյուղավորությունը, կազմում է Որոտանի, Ողջիի և Գեղիի գետերի ջրբաժանը:  
Երկարությունը՝ շուրջ 70 կմ, լայնությունը՝ 15-26 կմ: Առավելագույն  
բարձրությունը Արամազդ լեռն է (3399 մ):


Լանջերը կտրտված են Որոտանի և Գեղիի վտակների խոր (մինչև 800 մ)  
հովիտներով: Գիրաթաղ-Սվարանց գետահովիտներով բաժանվում է արևմտյան և  
արևելյան մասերի: Արևմտյան մասը բարձրադիր հորստաձև բեկոր է՝ կազմված  
պալեոզոյի փոխակերպային, նստվածք, և եոցենի հրաբխածին-  
նստվածքային ապարներից, գրանիտոիդային ներժայթույթներից:

Արևելյան մասը՝ Սուսանասարը, համեմատաբար ցածրադիր է, միաթեք՝  
կազմված յուրայի ու կավճի հրաբխածին ապարներից:

Երևակման շրջանի երկրաձևաբանական և լանջերի թեքությունների  
սխեմատիկ քարտեզները ներկայացված են նկար 4-5-ում:

### **3.2. Արտածին երկրաբանական երևույթներ, սեյսմիկ բնութագիր**

Գիժգետի երևակման տարածքում արտածին երկրաբանական երևույթների  
վերաբերյալ տեղեկատվության հիմք է հանդիսանում Հայաստանում սողանքների  
տեխնիկական տեղեկագիրը (Միջազգային համագործակցության ճապոնական  
գործակալություն, ՀՀ քաղաքաշինության նախարարություն, 2005): Համաձայն նշված  
տեղեկագրի, հայցվող տարածքում և հարակից շրջանում հայտնի սողանքային  
մարմինների տեղադիրքը ներկայացված է նկար 6-ում:




Նկար 4.




ԼԱՍՁԵՐԻ ԹԵՔՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄՆԵՍՄԱՏԻԿ  
ՔԱՐՏԵԶ

Կոորդինատային համակարգ՝ WGS 84 (ARMREF 02)



ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ  
1 - Զարհկող և թեք լանջեր (12-20° թեքություն)

Նկար 5.




Նկար 6.

Ըստ արտակարգ իրավիճակների նախարարության տրամադրված տեղեկատվության՝ Գիժգետի երևակման հայցվող տարածքում են գտնվում 020-0530 և 020-0630 սողանքային մարմինները: Սողանքային մարմինների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1.

Սողանքի համարը	Կենտրոնի կոորդինատները						Բարձր., մ	Երկար., մ	Լայն., մ	Մակերեսը, հա
	Հս.լայն.			Արլ. երկայն.						
	աստ.	րոպե	վայրկ.	աստ.	րոպե	վայրկ.				
SYUN-020-0530	39	21	38	45	53	30	2344	800	1200	40
SYUN-020-0630	39	22	49	45	54	33	2204	400	1600	29

Ըստ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2020 թվականի դեկտեմբերի 28-ի «Երկրաշարժադիմացկուն շինարարություն. նախագծման նորմեր» N102-Ն հրամանի՝ հայցվող տարածքը գտնվում է 1-ին սեյսմիկ գոտում, որտեղ գրունտի հորիզոնական արագացման մեծությունը կազմում է 300 սմ/վ<sup>2</sup> կամ 0.3g (նկար 7):




Նկար 7.

### 3.3. Կլիմայական պայմաններ

Գիծգետի երևակման շրջանի կլիման բնութագրվում է որպես չափավոր ցուրտ և ցուրտ (նկար 8): Շրջանում գործում են երկու օդերևութաբանական կայաններ՝ Միսիան (1580մ) և Միսիանի լեռնանցք (2380մ):





Նկար 8.

Երևական շրջանի կլիման՝ կախված բարձունքային գոտիականությունից, փոփոխվում է բարեխառն տաքից մինչև ցուրտ: Ստորև աղյուսակներ 2-7-ում ներկայացված են շրջանի կլիմայական բնութագրերը:

Աղյուսակ 2.

Օդի ջերմաստիճանը

Դիտակայանը	Ջերմաստիճանը ըստ ամիսների, °C												Տարեկան միջին	Բացարձակ նվազ.	Բացարձակ առավել.
	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII			
Միսիանի լեռնանցք	-8.2	-7.5	-4.3	1.3	6.3	9.9	12.7	12.8	9.9	4.7	-1.0	-5.9	2.6	-26	31
Միսիան	-4.5	-3.0	0.9	6.8	11.4	15.0	18.0	17.8	14.0	8.6	2.7	-2.2	7.1	-34	36

Աղյուսակ 3.

Մթնոլորտային տեղումները

Դիտակայանը	Տեղումները ըստ ամիսների, միջին ամսական/առավելագույն օրական մմ												Տարեկան
	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	
Միսիանի լեռնանցք	53	64	77	101	102	71	43	26	36	64	56	64	757
	23	37	27	91	50	41	48	34	31	47	41	45	91
Միսիան	18	22	36	57	73	57	27	16	23	37	30	18	414
	26	20	22	37	38	47	54	39	29	35	32	22	54

Աղյուսակ 4.

Ձնածածկույթը

Դիտակայանը	Առավելագույն տասնօրյակային բարձրությունը, սմ	Տարվա մեջ ձնածածկույթով օրերի քանակը	Չյան մեջ ջրի առավելագույն քանակը, մմ
Միսիանի լեռնանցք	36	67	90
Միսիան	214	157	720

Աղյուսակ 5.

Օդի հարաբերական խոնավությունը

Դիտակայանը	Ըստ ամիսների, %%												Տարեկան միջին
	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	
Միսիանի լեռնանցք	81	83	83	77	76	77	76	72	71	71	76	81	77
Միսիան	71	71	71	70	71	69	65	65	70	71	73	72	70

Արևափայլը (ըստ Միսիան կայանի)

Բնութագիրը	Ըստ ամիսների												Տարեկան
	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	
Արևափայլի տևողությունը	158	157	167	174	237	292	319	303	261	203	160	148	2579
Առանց արևի օրերի թիվը	4	3	3	2	1	0.1	0.2	0.1	0.4	2	3	4	23

Քամիների ուղղությունների կրկնելիությունը (ըստ Միսիան կայանի)

Ամիսներ	Կրկնելիությունը, %								Անհորնությունների կրկնելիությունը, %	Միջին ամսական արագությունը, մ/վ	Միջին տարեկան արագությունը, մ/վ	Ուժեղ քամիներով օրերի քանակը, օր
	Միջին արագությունը, մ/վ											
	Ուղղությունները											
	Հս	Հս-Արլ	Արլ	Հվ-Արլ	Հվ	Հվ-Արմ	Արմ	Հս-Արմ				
հունվար	8	1	14	2	2	2	26	45	56	1.9	2.2	2
	3.5	2.6	3.6	2.5	2.5	3.5	3.6	3.9				
ապրիլ	4	2	36	6	2	6	25	19	55	2.0	2.2	2
	3.4	3.2	4.1	3.7	3.4	4.0	3.6	3.9				
հուլիս	1	1	79	16	0	1	1	1	45	3.1	2.2	2
	3.1	4.4	5.0	4.5	3.6	3.7	3.3	3.0				
հոկտեմբեր	2	2	53	7	2	6	20	8	65	1.6	2.2	2
	2.7	2.8	4.2	3.2	2.9	3.9	3.7	3.8				

**3.4. Մթնոլորտային օդ**

ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից իրականացվում է մթնոլորտային օդի մոնիթորինգ Երևան, Գյումրի, Վանաձոր, Ալավերդի, Հրազդան, Արարատ, Ծաղկաձոր, Չարենցավան, Կապան և Քաջարան քաղաքներում: Ընդհանուր առմամբ վերը թվարկված բնակավայրերում գործում է 15 անշարժ՝ ակտիվ նմուշառման դիտակայան, և 214 շարժական՝ պասիվ նմուշառման դիտակետ:

Գիծգետի երևակման և հարակից շրջանում պետական մոնիթորինգի շրջանակներում մթնոլորտային օդի աղտոտվածության դիտարկումներ չեն կատարվում:

Երևակման շրջանում գտնվող Արևիս, Ցղունի, Նժդեհ գյուղի բնակիչները զբաղվում են հիմնականում կերային, բանջարաբուստանային կուլտուրաների և կարտոֆիլի մշակությամբ, ինչպես նաև անասնապահությամբ, թռչնաբուծությամբ և մեղվաբուծությամբ:

Տարածքում խոշոր արդյունաբերական ձեռնարկություններ չկան: Ոչ մետաղական օգտակար հանածոների արդյունահանման արտադրական գործունեություն իրականացնող կազմակերպություններ (բացահանքեր, քարի մշակման արտադրամասեր), սննդամթերքի արտադրության և սպասարկման ոլորտի ձեռնարկություններ կան Սիսիան քաղաքի շրջակայքում՝ հայցվող տարածքից ավելի քան 15 կմ հեռավորության վրա:

2022 թվականի նոյեմբերի 4-ին երևակման տարածքում կատարվել են մթնոլորտային օդի աղտոտվածության դիտարկումներ: Արձանագրվել են հետևյալ ցուցանիշները. փոշի  $0,02 \text{ մգ/մ}^3$ , ազոտի երկօքսիդ՝  $0,001 \text{ մգ/մ}^3$ , ծծմբի երկօքսիդ՝  $0,007 \text{ մգ/մ}^3$ :

### ***3.5. Ջրային ռեսուրսներ***


Շրջանի ջրագրական ցանցը ներկայացված է Որոտանի աջ վտակ՝ Սիսիան գետի ավազանով: Գետը սկիզբ է առնում Զանգեզուրի լեռնաշղթայի Շահապոնք լեռնագագաթի հյուսիսային լանջից՝ 3040 մ բարձրությունից: Երկարությունը 33 կմ է, ջրհավաք ավազանը՝ 395 կմ<sup>2</sup>: Վերին և միջին հոսանքում հոսում է V-աձև հովտով, այնուհետև՝ ընդարձակ, դարավանդային գոգհովտով, որտեղ կառուցված է Տոլորսի ջրամբարը:

Սնումը խառն է, գերակշռում է ձնաանձրևայինը (71%), վարարումը՝ մարտ-հունիսին, որի ընթացքում ձևավորվում է տարեկան հոսքի 72%-ը, ամռանը երբեմն հորդանում է: Տարեկան միջին ծախսը 3, 99 մ<sup>3</sup>/վ է:

Ջրերն օգտագործվում են ոռոգման և էներգետիկ նպատակներով:

ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից իրականացվում է Սիսիան գետի ջրերի

որակի մոնիթորինգ Արևիս գյուղից վերև հատվածում և գետաբերանում: 2022 թվականի ապրիլին և մայիսին այդ հատվածում գետի ջրերի որակը գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս), հունիսին՝ «միջակ» (3-րդ դաս): Գետաբերանի հատվածում ջրի որակը ապրիլին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), մայիսին՝ «վատ» (5-րդ դաս), հունիսին՝ «անբավարար» (4-րդ դաս) (նկար 9):




Նկար 9.



Երևակման տարածքով է հոսում Գիժգետը, որը սկիզբ է առնում Զանգեզուրի լեռնաշղթայից և Արևիս գյուղի մոտ աջից միախառնվում է Ռոտանին: Երկարությունը մոտ 10 կմ է:

Հայցվող տարածքից մոտ 1.7կմ հեռավորության վրա հոսում է Միսիան գետը (վերին հոսանքում՝ Տախտակն գետ), մոտ 3.5կմ հեռավորության վրա՝ Սալվարդ գետը: Տարածքի հյուսիսային սահմանից մոտ 500մ հյուսիս հոսում է Մատաղաջուր գետակը (նկար 10):



Նկար 10.

Գիժգետ գետից կատարվել է ջրի նմուշարկում, նմուշների վերլուծություն:

Աղյուսակ 8.

Ցուցանիշը	Նշանակությունը
Նիտրատ իոն	2.7մգN/լ
Նիտրիտ իոն	0.13մգN/լ
Ամոնիում իոն	0.95մգN/լ
Ֆոսֆատ իոն	0.35մգ/լ
Ընդհանուր ֆոսֆոր	0.16մգ/լ
Ցինկ	94մկգ/լ
Կախությային չոր նյութեր	13մգ/լ

Ցուցանիշը	Նշանակությունը
Պղինձ	14.6մկգ/լ
Քրոմ	9.8մկգ/լ
Արսեն	6.2մկգ/լ
Մոլիբդեն	1.1մկգ/լ
Մանգան	17մկգ/լ
Երկաթ, ընդհանուր	0.11մգ/լ

### 3.6. Հողեր

Հայցվող տարածքում հողային ծածկույթը ներկայացված է լեռնամարգագետնային թույլ ճմային, մարգագետնատափաստանային և դարչնագույն անտառային հողերով (նկար 11):


Լեռնամարգագետնային հողերին բնութագրվում են հումուսի բարձր պարունակությամբ (18.5%): Հումուսային նյութերի բաղադրությունում ֆուլվոթթուները գերազանցում են հումինաթթուներին (Chֆ:Cֆթ=0.3-0.8): Խիտ զարգացած արմատային համակարգի շնորհիվ այդ հողերը հիմնականում ունեն լավ արտահայտված նուրբ հատիկավոր ստրուկտուրա, աղքատ են կարբոնատներից: Հողաշերտի հզորությունը փոքր է, կախված ռելիեֆի պայմաններից, հողի հզորությունը կազմում է մինչև 35սմ: Մեխանիկական կազմը հիմնականում կավավազային է: Հողային լուծույթի ռեակցիան թթվային է՝ pH տատանվում է 4.5-6.4-ի սահմաններում:

Լեռնամարգագետնային հողերի քիմիական և ֆիզիկական հատկությունները բերված են ստորև աղյուսակում:

Աղյուսակ 9.

Խորությունը, սմ	Հումուսը, %	Ընդհանուր ազոտը, %	Կլանված կատիոնների գումարը, մ/էկվ 100գ հողում	pH-ը ջրային քաշվածքում	Մըյսբեյերի թվ
0-7	15.8	0.78	37.3	5.5	10.6
7-15	10.7	0.67	22.9	5.1	9.8
15-27	7.6	0.48	23.9	5.3	9.4
27-35	4.3	0.35	14.9	5.5	8.0

Մարգագետնատափաստանային տիպիկ հողերը հզորությունը նախնական դիտարկումներով արձանագրվել է 15-20սմ սահմաններում, հումուսի պարունակությունը կազմել է 8%, կլանված հիմքերի գումարը՝ 30.7%, հիդրոլիզային թթվայնությունը՝ 3.8 մ/էկվ 100գ հողում, pH-ը ջրային քաշվածքում՝ 6.2 : Դրանք ունեն լավ արտահայտված հատիկակնձկային ստրուկտուրա, կավավազային մեխանիկական կազմ:



Նկար 11.



Լեռնաանտառային գոտու դարչնագույն անտառային հողերը ձևավորվել կիրճերով, ձորակափոսորակային ցանցով խիստ կտրտված ռելիեֆի պայմաններում: Նկարագրվող շրջանում հանդես են գալիս լվացված ենթատիպերով: Բնութագրվում են դարչնագույն և մուգ-դարչնագույն գույնով, հումուսի բավական բարձր պարունակությամբ (մոտ 12%), կլանված հիմքների գումարը՝ 40.1 մ/էկվ 100գ, рН-ը ջրային քաշվածքում՝ 6.6: Հումինային նյութերում հումինաթթուների և ֆուլվոթուների քանակը գրեթե հավասար է: Բնական մերկացումներում դիտարկված առավելագույն հզորությունը կազմում է 0.4մ :


Ընկերության կողմից պատվիրված վերլուծությունների տվյալներով, ՀՀ առողջապահության նախարարի 25.01.2010թ.-ի №01-Ն հրամանով հաստատված քիմիական նյութերից հայցվող տարածքի հողերում արձանագրվել են. պղինձ 20-115մգ/կգ, ցինկ 15-198մգ/կգ, քրոմ 0.1-21մգ/կգ :

### **3.7. Բուսական աշխարհ**

Գիծգետի երևակման տարածքը բուսաշխարհագրական տեսակետից պատկանում է Բորեալ ֆլորիստիկ ենթաթագավորության Ցիրկումբորեալ գավառի Կովկասյան ենթագավառի Զանգեզուրի ֆլորիստիկ շրջանին: Տարածքի բուսականությունն ունի արտահայտված քսերո-մեզոֆիլ, մեզո-քսերոֆիլ և մեզոֆիլ բնույթ՝ յուրահատուկ են տափաստանները, մարգագետնատափաստանները, մարգագետինները: Երևակման շրջանի առանձին հատվածներում արտահայտված է անտառային բուսականությունը (նկար 12):

Առանձնացվում են բուսականության 3 հիմնական տիպ. վերին ալպիական մարգագետիններ և գորգեր, ենթալպյան հացահատիկային և տարախոտահացահատիկային մարգագետիններ, անտառային զանգվածներ (հիմնականում՝ կաղնուտներ):

Երևակման տարածքում դիտարկվել են հետևյալ բուսատեսակները. *Carex supina* Willd. ex Wahlenb. - Բոշխ կարճահասակ, *Campanula tridentata* - Եռաբաժան զանգակ, *Astragalus incertus* Ledeb. - Գազ անոթոշ, *Dactylis glomerata* L. - Ոզնախոտ հավաքված, , *Hordeum violaceum* Boiss. et Huet - Գարի մանուշակագույն, *Origanum vulgare* L. – խնկածաղիկ սովորական, *Thymus kotschyanus* Boiss. et Hohen. - Ուրց Կոչիի, *Koeleria albovii* Domin subsp. *albovii* – Բարակոտնուկ:



Նկար 12.

Միսիան գետի և դրա վտակների ափամերձ հատվածներում աճում են ուռի, մասրենի, պլոճենի:

Երևակման տարածքից մոտ 1.6կմ արևմուտք, շուրջ 500հա տարածքում աճում է կաղնիներով ներկայացված անտառ, որը ներառված է Միսիանի անտառտնտեսության կազմում (նկար 13):


«Միսիանի անտառտնտեսություն» մասնաձյուղի կազմում ընդգրկված են երկու՝ Շաղատի՝ 2817.0հա և Միսիանի՝ 3129.0հա մակերեսներով անտառպետություններ<sup>1</sup>:

«Միսիանի անտառտնտեսություն» մասնաձյուղի ընդհանուր տարածքը կազմում է 5946.0 հա, որից Շաղատի անտառպետությունը՝ 2817.0հա: Անտառտնտեսությունում հիմնական անտառկազմող տեսակներն են խոշորատեղ կաղնին, որի գերակշռությամբ ծառուտները զբաղեցնում են 1636.4 հա՝ 74740.0մ<sup>3</sup> ընդհանուր պաշարով, կամ անտառածածկ մակերեսի 78,4%-ը և ընդհանուր պաշարի 80.3%-ը: Սոճու գերակշռությամբ ծառուտները զբաղեցնում են 115.8 հա, ընդհանուր պաշարը կազմում է 7810 մ<sup>3</sup> (անտառածածկի 5.6%-ը և պաշարի 8.4%-ը): Գիհուտները կազմում է 119.0հա, 9800 խմ (անտառածածկ տարածքի 5.7%-ը և պաշարի 1.0%-ը) և մնացած տեսակները միասին կազմում են անտառածածկի 10.3%-ը և ընդհանուր պաշարի 1.3%-ը:

Շաղատի անտառպետությունում՝ միջին տարիքը 57, միջին բունիտետային դասը՝ 4.2, միջին լրիվությունը՝ 0.55, 1 հեկտարի միջին պաշարը՝ 47մ<sup>3</sup>, միջին տարեկան աճը՝ 0.81մ<sup>3</sup>: Միջին կազմը՝ 5.2 կաղնի, 1.5 գիհի, 1.3 բոխի, 0.7 սոճի, 0.4 հացենի, 0.4 ուռի, 0.2 թխկի, 0.1 բարդի, 0.1 խնձորենի և 0.1 թեղի:

---

<sup>1</sup> <http://env.am/storage/files/sisian-hayt-lramshak.pdf>



Նկար 13.

Գիծգետի երևակման տարածքում ՀՀ բույսերի կարմիր գրքում ընդգրկված տեսակների առկայությունը պարզելու նպատակով կատարվել է ՀՀ կառավարության 29.01.2010թ.-ի N72-Ն որոշման տվյալների վերլուծություն:

Համաձայն ՀՀ բույսերի կարմիր գրքի տվյալների երևակման շրջանում, հարակից տարածքներում հայտնի են մի շարք բուսատեսակներ, ինչի նկարագիրը ներկայացված է ստորև աղյուսակ 10-ում:

Աղյուսակ 10.

Բուսատեսակը	Կարգավիճակը	Տարածումը	Առանձնահատկությունները	Պահպանության միջոցառումները
1	2	3	4	5
Շնկոտեմ զանգեզուրի Thlaspi zangezuricum Tzvel	Վտանգված տեսակ: Հայաստանի էնդեմիկ է:	Հայաստանում հանդիպում է Զանգեզուրի (լեռնագագաթ Խուստուփ, Արավուս) և Մեղրու (Վարդանաձոր) ֆլորիստական շրջաններում:	Աճում է ենթալպյան և ալպյան գոտիների ծ. մ. 2000-3100մ բարձրությունների վրա, ժայռաճեղքերում:	Պահպանության միջոցառումներ չեն իրականացվում:
Թրաշուշան հայաստանյան Gladiolus hajastanicus Gabrielian	Վտանգված տեսակ: Հայաստանի էնդեմիկ է:	Հայաստանում տարածված է Արագածի, Սևանի, Դարեղեգիսի և Զանգեզուրի ֆլորիստական շրջաններում:	Աճում է վերին և ենթալպյան գոտիներում, ծ. մ. 1800-2900մ բարձրությունների վրա՝ մարգագետիններում, կաղնու ենթալպյան նոսրանտառներում, ժայռոտ տեղերում:	Պահպանվում է «Սևան» ազգային պարկի տարածքում:
Տանձենի Գրոսհեյմի Pyrus grossheimii Fed.	Վտանգված տեսակ: Հայտնի են 2 պոպուլյացիաներ:	Հանդիպում է Զանգեզուրի Արավուս գյուղի շրջակայքում և Մեղրու ֆլորիստական շրջաններում:	Աճում է միջին և լեռնային գոտիներում, ծ. մ. 1800-2300մ բարձրությունների վրա. Անտառներում, անտառների եզրերին	Պահպանության միջոցառումներ չեն իրականացվում:

Երևակման տարածքը ուսումնասիրվել է երթուղիներով՝ ՀՀ բույսերի կարմիր գրքում գրանցված, վերոնշված տեսակներ հայտնաբերելու նպատակով:

Դիտարկումների արդյունքներով երևակման տարածքում շնկոտեմ զանգեզուրի, թրաշուշան հայաստանյան և տանձենի Գրոսհեյմի տեսակներ չեն արձանագրվել:



### 3.8. Կենդանական աշխարհ

Տարածքի կենդանական աշխարհի ուսումնասիրություններ կատարվել են 2022 թվականի ամռան ամիսներին: Գնայուկ բզեզներից դիտարկվել են *Elaphropus haemorrhoidalis*, գատիկներից *Coccinella septempunctata*, թարախահաններից *Mylabris variabilis*: Գիծգետ և Սիսիան գետերի հովիտներում նշվել է լճագորսո (Pelophilax ridibundus), ցածրադիր հատվածի ժայռային մերկացումների հատվածներում՝ միջին մողես (*Lacerta media*):

Կաթնասուններից հանդիպել է աղվես (*Vulpes vulpes L.*), գայլ (*Canis lupus L.*) և եվրոպական նապաստակ (*Lepus europaeus Pall.*), սովորական դաշտամուկ (*Microtus socialis*):

Թռչուններից դիտարկվել են սովորական կաչաղակ (*Pica pica L.*), տնային ճնճղուկ (*Passer domesticus L.*), սև կեռնեխ (*Turdus merula L.*), մոխրագույն կաքավ (*Perdix perdix*): Նշվել է սովորական հողմահար բազեի թռիչք:



Ըստ ՀՀ կառավարության 29.01.2010թ.-ի N71-Ն որոշման, երևակման շրջանում հայտնի են ՀՀ կենդանիների կարմիր գրքում գրանցված հետևյալ տեսակները.

Աղյուսակ 11.

Տեսակը	Կարգավիճակը	Ապրելավայրերը	Պահպանության միջոցառումները
1	2	3	4
Գառնանգղ (Մորուքավոր անգղ) <i>Gypaetus barbatus</i> Linnaeus	Սակավաթիվ, վտանգված տեսակ:	Բնադրում է առավելապես, բարձր լեռների ժայռոտ տեղամասերում, գերադասելով խորը ժայռոտ կիրճերը, որպես կանոն ծ. մ. 800-2000մ բարձրություններում:	Մեկ զույգը բնադրում է «Խոսրովի անտառ» արգելոցում, երկու մյուս զույգերի կերային տարածքները գտնվում են «Շիկահող» արգելոցում և «Դիլիջան» ազգային պարկում:
Գիշանգղ, <i>Neophron percnopterus</i> Linnaeus	Սակավաթիվ, վտանգված տեսակ:	Բնադրում է առավելապես, բարձր լեռների ժայռոտ տեղամասերում, գերադասելով խորը ժայռոտ կիրճերը, որպես կանոն ծ. մ. 800-2000մ բարձրություններում:	10 զույգերը բնադրում են «Խոսրովի անտառ» և «Շիկահող» արգելոցներում, «Դիլիջան» և «Սևան» ազգային պարկերում:
Սպիտակագլուխ անգղ <i>Gyps fulvus</i>	Սակավաթիվ, վտանգված տեսակ:	Բնադրում է առավելապես, բարձր լեռների ժայռոտ տեղամասերում, գերադասելով խորը ժայռոտ կիրճերը, որպես կանոն ծ. մ. 800-2000մ բարձրություններում	Առնվազն 5 զույգերը բնադրում են «Խոսրովի անտառ» արգելոցում: Մյուս զույգերի կերային տարածքները գտնվում են «Շիկահող» արգելոց, «Դիլիջան» և «Սևան» ազգային պարկերում:
Օձակեր արծիվ <i>Circaetus gallicus</i>	Սակավաթիվ, մասնատված արեալով և կրճատվող քանակով տեսակ է:	Բնադրում է անտառային շրջաններում, իսկ որսը կատարում է բաց տարածքներում:	Պահպանվում է «Խոսրովի անտառ» և «Շիկահող» արգելոցներում:
Փոքր ենթարծիվ, <i>Aquila pomarina</i>	Սակավաթիվ, խոցելի տեսակ է:	Սաղարթավոր և խառը անտառներ:	Մեկական զույգ պահպանվում «Խոսրովի անտառ» և «Շիկահող» պետական արգելոցներում և երկուական՝ «Սևան» և «Դիլիջան» ազգային պարկերում:
Քարարծիվ, <i>Aquila chrysaetos</i>	Սակավաթիվ, խոցելի տեսակ է:	Զբաղեցնում է բաց և կիսաբաց տեսակի բիոտոպը:	Երեք-չորս զույգեր բնադրում են «Խոսրովի անտառ» պետական արգելոցում, մեկ-երկուսը՝ «Դիլիջան» ազգային պարկում:

1	2	3	4
Տափաստանային արծիվ Aquila nipalensis orientalis	Քիչ քանակությամբ հանդիպող, խոցելի տեսակ, որը հանդիպում է Հայաստանում հիմնականում չուի ընթացքում:	Լեռնատափաստաններ, գյուղատնտեսական հողեր:	Գրանցված է CITES-ի Հավելված 2-ում, Բեռնի Կոնվենցիայի Հավելված 2-ում:
Գաճաճ արծիվ Hieraetus pennatu	Տեսակն ընդգրկված է ԲՊՄՄ Կարմիր ցուցակում «Least Concern» կարգավիճակով:	Նախընտրում է բնադրել լայնատերև և համախառն անտառներում, որսի տարածքը գտնվում է բաց լեռնատափաստանային գոտում:	Մոտ 5 գույգ բնադրում է ՀՊՏ-ում, «Դիլիջան» ազգային պարկում, «Խոսրովի անտառ» և «Շիկահող» արգելոցներում:
Բալոբան Falco cherrug	Հայաստանի համար անհետացող տեսակ է:	Հավանաբար, Ախուրյանի հովտի ժայռային զանգվածները, որոնք շրջապատված են ծառերից զուրկ կիսաանապատային տեղամասերով:	Պահպանվում է «Խոսրովի անտառ» արգելոցում և «Սևան» ազգային պարկում:
Սապսան Falco peregrinus Tunstall	Նստակյաց տեսակ է:	Բնակվում է ժայռերի առկայությամբ տարբեր տիպի բիոտոպներում:	Գրանցված է CITES-ի Հավելված 1-ում, Բեռնի Կոնվենցիայի Հավելված 2-ում:
Կովկասյան Մարեհավ Tetrao mlokosiewicz	Անհետացող տեսակ է:	Ենթալպյան մարգագետինների սահմանը, կեչու պուրակներ, մրտավարդենու /ռոդոդենդրոն/ մացառներ, 1800-2500 մ ծ. մ. բարձրության վրա:	Տեսակի արեալի մի մասն ընդգրկված է «Դիլիջան» ազգային պարկի և «Շիկահող» արգելոցի տարածքում:


Տարածքը ուսումնասիրվել է երթուղիներով՝ ՀՀ կենդանիների կարմիր գրքում գրանցված տեսակներ հայտնաբերելու նպատակով: Աղյուսակ 11-ում նշված կենդանական տեսակները երևակման տարածքում չեն դիտարկվել:

### **3.9. Բնության հատուկ պահպանվող տարածքներ**

Գիծգետի երևակման շրջանում է գտնվում «Զանգեզուր» պետական արգելավայրը (նկար 14), որը հիմնվել է ՀՀ կառավարության 15.10.2009թ.-ի թիվ 1187-Ն որոշմամբ Սյունիքի մարզի Բարգուշատի լեռնաշղթայի հարավային և Զանգեզուրի լեռնաշղթայի արևելյան լանջերին:



«Զանգեզուր» պետական արգելավայրի հետ համընկնող տարածքների սխեմատիկ քարտեզ



Նկար 14.

Արգելավայրը ստեղծվել է մերձալպյան մարգագետնային և մարգագետնատափաստանային բնական էկոհամակարգերի լանդշաֆտային ու կենսաբանական բազմազանության, բնության եզակի հուշարձանների, բնական պաշարների բնականոն զարգացումը, պահպանությունը, պաշտպանությունը, վերականգնումը, վերարտադրությունը, ինչպես նաև բնական և ռեկրեացիոն ռեսուրսների կայուն օգտագործումն ապահովելու նպատակով:

Արգելավայրի հիմնական խնդիրներն են՝

- 1) արգելավայրի լանդշաֆտային և կենսաբանական բազմազանության բնականոն զարգացման ապահովումը և պահպանությունը.
- 2) վայրի բուսատեսակների և կենդանիների բնական միջավայրի պահպանությունը.
- 3) Զանգեզուրի և Բարգուշատի լեռնաշղթաների հարավային լեռնալանջերի վտանգված, կրիտիկական վիճակում գտնվող, խոցելի, անհետացման եզրին գտնվող,

ինչպես նաև Հայաստանի Կարմիր զրքում ընդգրկված բույսերի և կենդանիների տեսակների պահպանությունն ու վերարտադրությունը.

4) գիտաճանաչողական և էկոլոգիական զբոսաշրջության իրականացման նախադրյալների ստեղծումը.

5) էկոլոգիական մոնիթորինգի կազմակերպման, բնության տարեզրության վարման և տարածաշրջանի բնության թանգարանի կազմակերպման համար բազայի ապահովումը.

6) բնակչության էկոլոգիական կրթության ու դաստիարակության համար համապատասխան նախադրյալների ապահովումը:

Բնության հատուկ պահպանվող տարածքներ են նաև բնության հուշարձանները, որոնց ցանկը հաստատվել է ՀՀ կառավարության 14.08.2008թ.-ի N967-Ն որոշմամբ:

ՀՀ Սյունիքի մարզում հաշվառված բնության հուշարձանների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը ներկայացված է աղյուսակ 12-ում:

Աղյուսակ 12.

Հուշարձանի անվանումը	Գտնվելու վայրը
1	2
«Մատանա» բնական քանդակ	Սյունիքի մարզ, Գորիս քաղաքից մոտ 1,0 կմ հս-արլ, Գորիս-Ստեփանակերտ խճուղու ձախ կողմում
«Անանուն» ժայռ-մնացուկներ	Սյունիքի մարզ, Գորիս քաղաքի շրջակայքում
«Անանուն» ռելիեֆի փոքր ձևեր	Սյունիքի մարզ, Սիսիան քաղաքի հս-արլ եզրին
«Անանուն» ռելիեֆի փոքր ձևեր	Սյունիքի մարզ, Քաջարանի հանքային ջրի աղբյուրից հս-արլ, Ողջի գետի ձախ ափին
«Մալի ինտրուզիա» ներժայթուկ	Սյունիքի մարզ, Մեղրիի ենթատարածք, Ալվանք գյուղից մոտ 1-1,5 կմ հս, լքված Մալի գյուղի մոտ
«Անանուն» ապարների մերկացումներ	Սյունիքի մարզ, Երևան-Սիսիան խճուղու 180-181 կմ-ի ձախ և աջ կողմերում
«Խորձոր» V-աձև կիրճ	Սյունիքի մարզ, Խնածախ գյուղից 1.5-2.0 կմ հս-արլ
«Անանուն» էրոզիոն ռելիեֆ	Սյունիքի մարզ, Խնածախ գյուղից 2,5 կմ հս-արլ, Բերձոր տանող ճանապարհի ձախ կողմում
«Անանուն» սյունաձև բազալտներ	Սյունիքի մարզ, Հալիձոր գյուղից 2 կմ արմ, Որոտանի կիրճում
«Անանուն» ալյուտային դայկաներ	Սյունիքի մարզ, Կապան քաղաքից 30-35 կմ հվ

1	2
«Հերթ» որմնաքանդակ	Սյունիքի մարզ, Միսիան քաղաքից 3 կմ հս-արմ, «Շաքի» ջրվեժի մոտ
«Փղի ճտեր» որմնաքանդակ	Սյունիքի մարզ, Կապան քաղաքից մոտ 25 կմ հվ, «Շիկահող» պետարգելոց տանող ճանապարհին
«Անանուն» սյունաձև բազալտներ	Սյունիքի մարզ, Որոտան գյուղի հվ-արմ եզրին
«Անանուն» սյունաձև բազալտներ	Սյունիքի մարզ, Որոտան գյուղի հվ-արմ եզրին
«Շիշքար» (Բաղաքար) դայկա	Սյունիքի մարզ, Բաղաքար գետի աջ և ձախ կողմերում
«Անանուն» բուրգանման մնացուկներ	Սյունիքի մարզ, Վերիշեն գյուղից 2 կմ հս, Գորիս-Խոզնավար ճանապարհի ձախ կողմում
«Սատանի կամուրջ» բնական կամուրջ	Սյունիքի մարզ, Տաթև գյուղից 2,5 կմ հս-արլ
«Բնական թունել»	Սյունիքի մարզ, Քարահունջ գյուղի մոտ, Գորիս-Կապան խճուղու վրա
«Ագարակի» բրածո ֆլորա	Սյունիքի մարզ, Ագարակ քաղաք
«Շամբի» բրածո ֆլորա և ֆաունա	Սյունիքի մարզ, Շամբ գյուղից 500 մ հս-արմ, Որոտան գետի ձախ ափին, 1300 մ բարձրության վրա
«Ծաղկարի» լիճ	Սյունիքի մարզ, Զանգեզուրի լեռնաշղթայի կատարային հատվածում, Ծաղկարի գետի վերնամասում, Քաջարան քաղաքից մոտ 10 կմ հվ-արմ, ծ.մ-ից 3271,5 մ բարձրության վրա
«Կապուտան» (Գոգի) լիճ	Սյունիքի մարզ, Քաջարան գետի ակունքներում, Քաջարան քաղաքից մոտ 5-6 կմ հվ-արմ, ծ.մ-ից 3202 մ բարձրության վրա
«Անտակ» լիճ	Սյունիքի մարզ, Բոնակոթ գյուղի Զարդով ջրամբարից 1 կմ հս-արմ
«Գազանա» լիճ	Սյունիքի մարզ, Գեղի գյուղի ակունքներում, Գեղի գյուղից մոտ 9 կմ հս-արլ, ծ.մ-ից 3111,8 մ բարձրության վրա
«Կապույտ» լիճ	Սյունիքի մարզ, Մեղրի գետի ակունքներում, Լիճք գյուղից մոտ 8 կմ հս-արմ
«Բերդալիճ» լիճ	Սյունիքի մարզ, Ծղուկ գյուղից 13 կմ հս-արլ, ծ.մ-ից 3005, 7 մ բարձրության վրա
«Կապուտջուղ» ջրվեժներ	Սյունիքի մարզ, Քաջարան քաղաքից 3.0 կմ արմ, Կապուտջուղ գետակի վրա
«Շինուհայր» ջրվեժ	Սյունիքի մարզ, Որոտան գետի ձախ կողմում, Հին Շինուհայրից 0.5 կմ հս-արմ
«Աղվան» ջրվեժ	Սյունիքի մարզ, Մեղրի գետի ձախ վտակ Մալն գետակի, լքված Մալն գյուղից 2.0 կմ հվ-արլ
«Վարդանիձոր» ջրվեժ	Սյունիքի մարզ, Վարդանիձոր գյուղից 2.5 կմ հս-արմ, Բերդաքար գետի Վարդանիձոր վտակի վրա

1	2
«Աջիբաջ» ջրվեժ	Սյունիքի մարզ, Գեղի գետի ձախակողմյան Աջիբաջ վտակի վրա, համանուն գյուղից 4 կմ հս-արմ
«Շաքի» ջրվեժ	Սյունիքի մարզ, Որոտան գետի ձախակողմյան Շաքի վտակի վրա
«Պատավաձոր» ջրվեժ	Սյունիքի մարզ, Բերդաքար գետի ձախակողմյան վտակի վրա, Վարդանիձոր գյուղից 3 կմ հս-արմ
Մբ. Վարդան եկեղեցու քարայր կացարանի և աղբյուրի համալիր	Սյունիքի մարզ, Անգեղակոթ գյուղից 0.5 կմ արմ, Անգեղակոթ-Շաղաթ ճանապարհից աջ
Արծվանիկ գյուղի բնական քարանձավներ	Սյունիքի մարզ, Արծվանիկ գյուղից 3 կմ հվ, Երիցավանքի շրջակայքում
«Որոտան» բնապատմական համալիր	Սյունիքի մարզ, Որոտան գյուղի հվ-արմ եզրին աջ ու ձախ ափերին
Հին Գորիսի («Կյորես») հրաբխային ապարներ	Սյունիքի մարզ, Գորիս քաղաքի արլ մասում, Վարարակ գետի ձախ ափին
«Մեղրիի սուսի»	Սյունիքի մարզ, քաղ. Մեղրի
«Շիբլյակ»	Սյունիքի մարզ, Կապան քաղաք, Առաջաձոր տեղամասում, 800-900 մ բարձրության վրա
«Սֆազնումային մամուռներ»	Սյունիքի մարզ, Գոռայք գյուղից 5-6 կմ հս, Որոտանի լեռնանցքի մոտ
«Ջրաղացի» աղբյուրներ	Սյունիքի մարզ, Անգեղակոթ գյուղի հվ-արմ մասում, ծ.մ-ից 1770 մ բարձրության վրա
«Ծործոր» աղբյուրներ	Սյունիքի մարզ, Անգեղակոթ գյուղից 4 կմ հեռավորության վրա, Ծործոր գետի աջ ափին, ծ.մ-ից 1650 մ բարձրության վրա
«Վարդանաձորի» աղբյուրներ	Սյունիքի մարզ, Անգեղակոթ գյուղից 17 կմ հվ-արմ, Սիսիան-Նախիջևան ավտոճանապարհից 160 մ ներքև
«Սմբուլի» աղբյուր	Սյունիքի մարզ, Անգեղակոթ գյուղից հվ-արլ մասում, ծ.մ-ից 1740 մ բարձրության վրա
«Անապատի» աղբյուր	Սյունիքի մարզ, Անգեղակոթ գյուղի հարավային ծայրամասում, ծ.մ-ից 1840 մ բարձրության վրա
«Ջրաղացի» աղբյուր	Սյունիքի մարզ, Բարձրավան գյուղից 0.5 կմ հս-արմ, ծ.մ-ից 1350 մ բարձրության վրա
«Սևջուր» աղբյուր	Սյունիքի մարզ, Գեղի գյուղի հս ծայրամասում, Գեղի գետի ձախ ափին, ջրաղացի և կամրջի միջև, ծ.մ-ից 1600 մ բարձրության վրա
«Արքայից» աղբյուր	Սյունիքի մարզ, Դավիթ Բեկ գյուղի հս ծայրամասում, Քաշունի գետի կիրճի աջ ափին, ջրաղացի և կամրջի միջև, ծ.մ-ից 1065 մ բարձրության վրա

1	2
«Քյահրիզ» աղբյուր	Սյունիքի մարզ, Նոնաձոր գյուղից 1.5 կմ հս-արլ, ծ.մ-ից 670 մ բարձրության վրա
«Անանուն» աղբյուր	Սյունիքի մարզ, Շաքի գյուղի հս-արմ ծայրամասում, ծ.մ-ից 1685 մ բարձրության վրա
«Մեծ Նավի» աղբյուր	Սյունիքի մարզ, Շինուհայր գյուղից 0.5 կմ հս-արմ, ճամփեզրին, խաչքարի մոտ
«Որոտան» աղբյուր	Սյունիքի մարզ, Որոտան գյուղի հս ծայրամասում
«Կաթնաղբյուր» աղբյուր	Սյունիքի մարզ, Տանձավեր գյուղի հվ-արմ ծայրամասում, անտառի եզրին, Քաշունի գետի աջ ափին, ծ.մ-ից 1570 մ բարձրության վրա
«Սպիտակջուր» աղբյուր	Սյունիքի մարզ, Տանձատափ գյուղից 1.4 կմ հվ, անանուն գետակի ձախ ափին, ծ.մ-ից 1480 մ բարձրության վրա
«Շռան» աղբյուր	Սյունիքի մարզ, Քաշունի գյուղից 1.2 կմ հվ-արլ, ծ.մ-ից 1930 մ բարձրության վրա
«Ներքին» աղբյուր	Սյունիքի մարզ, Քարահունջ գյուղի հվ մասում, սողանքի մարմնի աջ կողմում, ծ.մ-ից 1250 մ բարձրության վրա

Երևակման տարածքում, ինչպես նաև մոտակա Արևիս, Նժդեհ, Յղունի գյուղերում՝ տեղամասից մոտ 10կմ շառավղով տարածքներում, բնության հուշարձաններ հաշվառված չեն :

#### 4. ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

##### 4.1. Ենթակառուցվածքներ

Գիծգետի երևակման հայցվող տարածքը վարչական առումով գտնվում է ՀՀ Սյունիքի մարզում:

Սյունիքի մարզը գտնվում է Հայաստանի Հանրապետության տարածքի հարավում: Մարզը հյուսիսից սահմանակից է Վայոց ձորի մարզին, հարավից՝ պետական սահմանով սահմանակից է Իրանին (սահմանի երկարությունը 42 կմ է), արևմուտքից՝ Նախիջևանին և արևելքից՝ Արցախին: Սյունիքի մարզը զբաղեցնում է Զանգեզուր բնաշխարհի տարածքը, որը ներառում է Որոտան, Ողջի գետերի վերին ու միջին հոսանքների ավազանը և Զանգեզուրի՝ Մեծ Կովկասից հետո Հարավային Կովկասում ամենաբարձր լեռնաշղթայի, արևելյան լանջերը: Մարզի ամենաբարձր լեռնագագաթը Կապուտջուղն է (3 906 մ), իսկ ամենացածր վայրը՝ Մեղրու կիրճը (Արաքսի հովիտ 380մ): Ծովի մակերևույթից 3 250 մ բարձրության վրա՝ Կապույտ լճից սկիզբ է առնում Մեղրի գետը, իսկ Կապուտջուղ լեռան հալոցքաջրերից՝ Կապուտջուղ գետը, որի հետ Քաջարանց գետի միահյուսումից կազմավորվում է Ողջի գետը:

Սյունիքի մարզը, գրավելով ռազմավարական և աշխարհաքաղաքական նշանակության կարևոր դիրք, ունենալով բնահումքային հարուստ պաշարներ, արտադրական մեծ ներուժ և հանդիսանալով հանրապետության ամենախոշոր վարչական ու տնտեսական մարզերից մեկը, միաժամանակ մնում է համեմատաբար քիչ բնակեցված և տնտեսապես թույլ յուրացված, ինչը մասամբ պայմանավորված է մայրաքաղաքից ունեցած մեծ հեռավորությամբ և տրանսպորտային հաղորդակցության այլընտրանքային միջոցների բացակայությամբ:

Օգտակար հանածոներով ամենահարուստ մարզն է: Դրանցից կարևորագույններն են՝ 17 գունավոր (պղինձ, մոլիբդեն, ցինկ և այլ գունավոր) և թանկարժեք (ոսկի, արծաթ) մետաղների հանքաքարերը, ինչպես նաև ոչ մետաղային օգտակար հանածոների մի ամբողջ շարք (շինարարական և երեսապատման քարեր, բազալտային հումք, կրաքարի և այրվող թերթաքարերի, մարմարի, գրանիտի, պերլիտի և դիատոմիտների պաշարներ): Մարզի տնտեսության ընդհանուր ծավալում գերակշռողը արդյունաբերության և գյուղատնտեսության ոլորտներն են:

Մարզի արդյունաբերության հիմնական ճյուղը հանքարդյունաբերությունն է, սննդամթերքի և էլեկտրաէներգիայի արտադրությունը: Մարզում արտադրվող

Էլեկտրաէներգիայի գերակշիռ մասը բաժին է ընկնում Որոտանի ՀԷԿ-ի կասկադին: Գյուղատնտեսությունը հիմնականում մասնագիտացած է բուսաբուծության (մասնավորապես՝ հացահատիկային մշակաբույսերի և կարտոֆիլի արտադրություն) և անասնաբուծության (մասնավորապես՝ խոշոր և մանր եղջերավոր կենդանիների բուծում) մեջ:

Բեռնաուղևորափոխադրումները մարզում իրականացվում են ավտոմոբիլային և էլեկտրատրանս-պորտով (ճոպանուղի): Մարզի տարածքով է անցնում Հայաստանի Իրանի Իսլամական Հանրապետության հետ կապող ավտոմայրուղին, որն էական դեր ունի մարզի տնտեսության զարգացման գործում: 2008թ. շահագործման է հանձնվել «Կապան-Ծավ-Մեղրի» ռազմավարական նշանակություն ունեցող ավտոմայրուղին, որը, որպես այլընտրանք «Կապան-Քաջարան-Մեղրի» միջպետական ճանապարհին՝ տեխնիկական ցուցանիշներով գերազանցում է վերջինիս: Մարզով են անցնում Արցախը Հայաստանին կապող կարևոր ավտոմայրուղին և Իրանի Իսլամական Հանրապետությունը ցամաքային անմիջական կապով Հայաստանին կապող միակ ճանապարհը:

Կապան քաղաքը (2022թ. տարեսկզբին՝ 41.5 հազ. մարդ) գտնվում է Խուստուփ լեռան ստորոտում (3201 մ), Երևանից 301 կմ հեռավորության վրա: Տնտեսության առաջատար ոլորտն արդյունաբերությունն է, ընդհանուր ծավալում գերակշռողը հանքարդյունաբերությունն է, որից կարևորագույններն են գունավոր և ազնիվ մետաղների արդյունահանումը: Որոշակի տեսակարար կշիռ ունեն նաև մշակող արդյունաբերությունը (սննդամթերքի, մանածագործական արտադրատեսակների ոչ մետաղական հանքային արտադրատեսակների, այլումինե և մետաղապլաստիկ իրերի, բնափայտի մշակման ու փայտե արտադրատեսակների, կահույքի և էլեկտրական արտադրության) և էլեկտրաէներգիայի արտադրությունը:

Քաջարան քաղաքը (2022թ. տարեսկզբին՝ 6.8 հազ. մարդ), գտնվում է Երևանից 326 կմ հեռավորության վրա, մարզկենտրոնից՝ 25 կմ:

ՀՀ գունավոր մետալուրգիայի կենտրոնն է՝ պղնձի և մոլիբդենի հզոր հումքային բազա հանդիսացող հազվագյուտ հանքավայրի շահագործման հիման վրա: Տնտեսության հիմնական և առաջատար ճյուղը հանքարդյունաբերությունն է: Քաղաքի տնտեսության մեջ իր բաժինն ունի նաև մշակող արդյունաբերությունը, որում 18 առանձնանում են սննդամթերքի և պատ-րաստի մետաղե արտադրատեսակների արտադրությունը:

Գորիս քաղաքը (2022թ. տարեսկզբին՝ 19.7 հազ. մարդ), գտնվում է Երևանից 236 կմ հեռավորության վրա, մարզկենտրոնից՝ 65 կմ, տնտեսության հիմնական ճյուղն արդյունաբերությունն է: Հիմնականում զարգացած են էլեկտրաէներգիայի արտադրությունը, սննդամթերքի, մանածագործական արտադրատեսակների, կարի, ալյումինե և մետաղապլաստիկ իրերի, բնափայտի մշակման ու փայտե արտադրատեսակների և էլեկտրասարքավորանքի արտադրությունները:

Միսիան քաղաքը (2022թ. տարեսկզբին՝ 14.3 հազ. մարդ), գտնվում է Երևանից 201 կմ հեռավորության վրա, մարզկենտրոնից՝ 110 կմ, տնտեսության ծավալում գերակշռողն էլեկտրաէներգիայի արտադրությունն է, որոշակի տեսակարար կշիռ ունեն նաև այլ ոչ մետաղական հանքային արտադրատեսակների և սննդամթերքի արտադրությունները:

Դաստակերտ քաղաքը (2022թ. տարեսկզբին՝ 0.3 հազ. մարդ), գտնվում է Երևանից 221 կմ հեռավորության վրա, մարզկենտրոնից՝ 130 կմ: Աշխատանքներ են տարվում պղնձի և մոլիբդենի հանքերը վերագործարկելու համար:

Մեղրի քաղաքը (2022թ. տարեսկզբին՝ 4.2 հազ. մարդ), գտնվում է Երևանից 376 կմ հեռավորության վրա, մարզկենտրոնից՝ 75 կմ, տնտեսության ընդհանուր ծավալում գերակշռողը մշակող արդյունաբերությունն է: Որոշակի տեսակարար կշիռ ունեն էլեկտրաէներգիայի և մրգերի պահածոների ու հյութերի արտադրությունը:

Ագարակ քաղաքը (2022թ. տարեսկզբին՝ 3.9 հազ. մարդ), գտնվում է Երևանից 388 կմ հեռավորության վրա, մարզկենտրոնից՝ 87 կմ, տնտեսության առաջատար ոլորտը հանքարդյունաբերությունն է, որից կարևորագույնը գունավոր մետաղների արդյունահանումն է: Քաղաքի տնտեսության զարգացումը կապված է պղնձամոլիբդենային արտադրության հետ: Ագարակում են գտնվում Հայաստան-Իրան սահմանային մաքսակետերը:

2022 թվականի հունվարի 1-ի դրությամբ Սյունիքի մարզի ամբողջ բնակչությունը կազմել է 134.7 հազ. մարդ, որից քաղաքային բնակչությունը՝ 90.0 հազ. մարդ, գյուղականը՝ 44.0 հազ. մարդ:

Արդյունաբերական արտադրանքը 2021 թ.-ի հունվարի 1-ի դրությամբ կազմել է 359754.9 մլն. դրամ, արդյունաբերական արտադրանքի ֆիզիկական ծավալի ինդեքսը՝ 102.8%: Ըստ արդյունաբերական արտադրանքի ծավալը ըստ արտադրության բաժինների ներկայացված է հետևյալ կերպ. հանքագործական արդյունաբերություն – 301645.8 մլն. դրամ, մշակող արդյունաբերություն – 32924.3 մլն. դրամ,



Էլեկտրաէներգիայի, գազի, ջրի արտադրություն և բաշխում – 24019.9 մլն. դրամ, ջրամատակարարում, կոյուղի և թափոնների կառավարում և վերամշակում – 1164.9 մլն. դրամ:

Արդյունաբերական արտադրանքի արտադրությունն ըստ տնտեսական գործունեության տեսակների ներկայացված է ստորև աղյուսակ 13-ում:

Աղյուսակ 13.

ԱՐՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆՆ ԸՍՏ  
ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻՆ  
PRODUCTION OF INDUSTRIAL OUTPUT BY TYPES OF ECONOMIC ACTIVITY, 2020

	Թողարկված արտադրանքի ծավալը, ընթացիկ գներով, <sup>1</sup> մլն. դրամ Volume of produced production, in current prices <sup>1</sup> , mln.drams	Պատրաստի արտադրանքի իրացումը, ընթացիկ գներով, <sup>1</sup> մլն. դրամ Realisation of fabricated products in current prices <sup>1</sup> , mln.drams	Արտադրանքի ֆիզիկական ծավալի ինդեքսը, % Volume index of industrial production, %	
<b>ՄՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ SYUNIK MARZ</b>				
<i>Ամբողջ արդյունաբերությունը այդ թվում՝</i>	359 754.9	356 036.0	102.8	<i>Total industry including:</i>
<i>Հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում այդ թվում՝</i>	301 645.8	297 917.8	105.1	<i>Mining and quarrying including:</i>
մետաղական հանքաքարերի արդյունահանում	300 423.0	297 366.2	105.1	mining of metal ores
հանքագործական արդյունաբերության և բացահանքերի շահագործման այլ ճյուղեր	1 201.0	529.8	112.9	other mining and quarrying
հանքագործական արդյունաբերության հարակից գործունեություն	21.8	21.8	23.9	mining support service activities
<i>Մշակող արդյունաբերություն որից՝</i>	32 924.3	32 934.9	101.9	<i>Manufacturing of which:</i>
անդամթերքի արտադրություն	27 788.7	27 847.6	101.7	manufacture of food products
խմիչքների արտադրություն	304.8	355.4	69.0	manufacture of beverages
մանածագործական արտադրատեսակների արտադրություն	144.2	137.1	93.2	manufacture of textiles
հագուստի արտադրություն	55.9	55.9	74.6	manufacture of wearing apparel
քիմիական նյութերի և քիմիական արտադրատեսակների արտադրություն	111.8	111.8	103.8	manufacture of chemicals and chemical products
ռետինե և պլաստմասսայե արտադրատեսակների արտադրություն	129.5	129.5	79.4	manufacture of rubber and plastic products
այլ ոչ մետաղական հանքային արտադրատեսակների արտադրություն	2 801.4	2 816.4	99.5	manufacture of other non-metallic mineral products
պատրաստի մետաղե արտադրատեսակների արտադրություն, բացի մեքենաներից և սարքավորանքից	735.1	735.1	170.5	manufacture of fabricated metal products, except machinery and equipment
Էլեկտրական սարքավորանքի արտադրություն	531.4	531.4	82.7	manufacture of machinery
<i>Էլեկտրականության, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում</i>	24 019.9	24 019.9	81.8	<i>Electricity, gas, steam and air conditioning supply</i>
<i>Ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում</i>	1 164.9	1 163.3	100.4	<i>Water supply, sewerage, waste management and remediation activities</i>

Գյուղատնտեսական համախառն արտադրանքում բուսաբուծությունը կազմում է 12.7մլն.դրամ, անասնաբուծությունը՝ 41.7մլն.դրամ:

Հացահատիկային և հատիկալնդեղենային մշակաբույսերի ցանքսատարածությունները կազմել են 14440հա, բերքատվությունը՝ 15.6g/հա, համախառն բերքը՝ 22.2հազ.տոննա:

Կարտոֆիլի ցանքսատարածությունները կազմել են 1128հա, բերքատվությունը՝ 149.8g/հա, համախառն բերքը՝ 16.9հազ.տոննա:

Բանջարանոցային մշակաբույսերի ցանքսատարածությունները կազմել են 604հա, բերքատվությունը՝ 98.3g/հա, համախառն բերքը՝ 5.9հազ.տոննա, բոստանային կուլտուրաների համար համապատասխանաբար՝ 8հա, 146.2g/հա, 0.1հազ.տ: Պտղի և հատապտղի տնկարկների համար այդ ցուցանիշները կազմում են համապատասխանաբար 2627հա, 34.4g/հա և 8.9հազ.տոննա, խաղողի տնկարկների համար՝ 179հա, 30.5g/հա և 0.5հազ.տոննա:

Խոշոր եղջերավոր անասունների քանակը կազմել է 52.3հազ.գլուխ, որից կովերինը՝ 23.1հազ.գլուխ, խոզերինը՝ 11.4հազ.գլուխ, ոչխարներ և այծեր՝ 93հազ.գլուխ, ձիեր՝ 2.3հազ.գլուխ:

Մանրածախ առևտրի շրջանառությունը կազմել է 25875.9մլն.դրամ, ծառայությունների ծավալը՝ 24897.2մլն.դրամ, կացության և հանրային սննդի օբյեկտների շրջանառությունը՝ 920.8մլն.դրամ, առողջապահությունն ու բնակչության սոցիալական սպասարկումը՝ 590.2մլն.դրամ, ֆինանսական և ապահովագրական գործունեությունը՝ 17571.1մլն.դրամ:

Գործազուրկների թիվը կազմել է 8.8հազ.մարդ, որից կանայք՝ 6.0հազ.մարդ: Մարզում միջին ամսական անվանական աշխատավարձը եղել է 130134դրամ:

Կենսաթոշակառուների գրանցված քանակը՝ 22780 մարդ, կենսաթոշակի միջին չափը՝ 46269դրամ:

Նախադպրոցական հաստատությունների քանակը կազմել է 56, հաճախող երեխաների քանակը՝ 3903, մանկավարժների քանակը՝ 475, մեկ մանկավարժին ընկնող երեխաների թվաքանակը՝ 8.2:

2020/2021 ուսումնական տարում Սյունիքի մարզում գործել է 118 հանրակրթական դպրոց, աշակերտների թվաքանակը 16448, մանկավարժների թվաքանակը՝ 2199, մեկ մանկավարժին ընկնող աշակերտների թվաքանակը՝ 7.5:

Երաժշտական, արվեստի, գեղարվեստի դպրոցների, մանկապատանեկան ստեղծագործական կենտրոնների քանակը 2020/2021 ուսումնական տարում կազմել է 18, աշակերտների թվաքանակը՝ 2634:

Գործել են նախնական մասնագիտական (արհեստագործական) ուսումնական 5 հաստատություններ, դրանցում կրթվել են 355սան, աշխատել են 58 մանկավարժ:

Միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների քանակը կազմել է 7, ուսանողների թվաքանակը՝ 1013, մանկավարժների թվաքանակը՝ 262, ուսանողների թվաքանակը մեկ մանկավարժի հաշվով՝ 3.9:

Սյունիքի մարզում գործում է երկու բարձրագույն ուսումնական հաստատություն, որտեղ կրթություն են ստանում 1718 ուսանող և աշխատում են 192 հոգի պրոֆեսորադասախոսական անձնակազմ:

Գործում են 2 թատրոն, 4 թանգարան և 81 գրադարան: 11 մարզական կազմակերպություններում մարզվում են 1787 մարզիկ, օլիմպիական մարզաձևերով խմբերի քանակը՝ 124, ոչ օլիմպիական մարզաձևերով՝ 23:

#### **4.2. Հողերի տնտեսական յուրացման բնութագիր**

Գիծգետի երևակման տարածքը ներառված է Միսիան բազմաբնակավայր համայնքի Նժդեհ, Թասիկ, Բնունիս բնակավայրերի սահմաններում:

Միսիան բազմաբնակավայր համայնքը կազմավորվել է «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ 2017 թվականի հունիսի 9-ի ՀՕ-93-Ն օրենքի համաձայն, Միսիանի տարածաշրջանի 30 համայնքների միավորման արդյունքում, տարածքը կազմում է 123384 հա:

Ընդգրկում է 32 բնակավայր (2 քաղաք, 30 գյուղ), որից մեկը համայնքի կենտրոն Միսիան քաղաքն է (աղյուսակ 14):

Աղյուսակ 14.

h/h	Համայնքը և բնակավայրերը	Բարձրությունը ծովի մակարդակից, մ	Հեռ. Միսիանից /կմ/	Հեռ. Երևանից /կմ/	Հեռ. Կապանից /կմ/
1	2	3	4	5	6
1	Միսիան	1600		210	104
2	Ախլաթյան	1750	14	224	118
3	Աղիտու	1650	7	217	111
4	Անգեղակոթ	1840	15	239	104

1	2	3	4	5	6
5	Աշոտավան	1750	7	218	112
6	Արևիս	1950	20	231	125
7	Բալաթ	1700	23	246	126
8	Բնունիս	1830	12	223	117
9	Բռնակոթ	1700	7	217	111
10	Գետաթաղ	1470	24	238	132
11	Դաստակերտ	1920	20	234	124
12	Դարբաս	1500	23	235	129
13	Թանահատ	1920	19	229	123
14	Թասիկ	1740	12	223	117
15	Իշխանասար	1900	6	206	101
16	Լծեն	1560	23	234	128
17	Լոր	1680	26	240	134
18	Հացավան	1730	10	221	115
19	Մուցք	1870	26	251	130
20	Նժդեհ	2015	22	238	128
21	Նորավան	1700	10	222	99
22	Շաղատ	1760	21	246	123
23	Շաքի	1720	7	204	98
24	Շենաթաղ	1760	30	245	139
25	Որոտնավան	1450	14	226	120
26	Սալվարդ	1940	19	244	129
27	Վաղատին	1580	13	224	112
28	Տոլորս	1720	8	218	112
29	Տորունիք	1840	17	227	121
30	Ույծ	1600	3	215	101

Խոշորացված համայնքի բնակչության վերաբերյալ տվյալները ներկայացվում են ըստ ՀՀ վիճակագրական վարչության պաշտոնական հրապարակումների (<https://armstat.am/file/doc/99527423.pdf>).

Աղյուսակ 15.

Հ/Հ	Բնակավայրը	Բնակիչների քանակը (մարդ)
1	2	3
1	Միսիան	14 441
2	Ախլաթյան	534
3	Աղիտու	340
4	Անգեղակոթ	1526
5	Աշոտավան	472

1	2	3
6	Արևիս	343
7	Բալաք	150
8	Բնունիս	119
9	Բռնակոթ	1768
10	Գետաթաղ	136
11	Գորայք	432
12	Դաստակերտ	281
13	Դարբաս	553
14	Շամբ	408
15	Թանահատ	19
16	Թասիկ	257
17	Իշխանասար	192
18	Լծեմ	51
19	Լոր	297
20	Ծղուկ	319
21	Հացավան	232
22	Մուցք	209
23	Նժդեհ	99
24	Ղցոջնի	41
25	Նորավան	400
26	Շաղաթ	829
27	Շաքի	1134
28	Շենաթաղ	309
29	Որոտնավան	256
30	Սավվարդ	206
31	Սառնակունք	461
32	Սպանդարյան	290
33	Վաղատիմն	540
34	Տոլորս	400
35	Տորունիք	84
36	Ույծ	482

Ըստ խոշորացված համայնքի պաշտոնական կայքի տվյալների (<https://www.sisian.am/Pages/CustomPage/?CustomPageID=722b890c-cc0b-4c5d-bdf230fbeb4291>), 2022 թվականի դրությամբ բնակչության թվաքանակը կազմել է 29792 մարդ, գրանցված ծնունդների քանակը՝ 232, մահացության դեպքերի քանակը՝ 301, ամուսնությունների քանակը՝ 100, ամուսնալուծությունների քանակը՝ 21, տնային տնտեսությունների թիվը՝ 4318, ընտանեկան նպաստ ստացող տնտեսությունների

քանակը՝ 495, կենսաթոշակառուների քանակը՝ 4173 մարդ, հաշմանդամություն ունեցող անձանց քանակը՝ 1465 մարդ:

Խոշորացված համայնքում 2022 թվականի դրությամբ գործում են հետևյալ մշակութային, կրթական և մարզական հաստատությունները.

Աղյուսակ 16.

Հաստատության տեսակը	Քանակը
1	2
1. Գրադարանների քանակը	31
2. Արվեստի դպրոցների քանակը	1
3. Երաժշտական դպրոցների քանակը	1
4. Նախադպրոցական հիմնարկների քանակը	22
5. Հանրակրթական դպրոցների քանակը	35
6. Նախնական մասնագիտական (արհեստագործական) ուսումնական հաստատությունների քանակը	-
7. Միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների քանակը	1
8. Բարձրագույն ուսումնական հաստատությունների քանակը	1
9. Մարզադպրոցների քանակը	1

Համայնքի բնակարանային ֆոնդի ընդհանուր մակերեսը կազմում է 161376մ<sup>2</sup>, Բազմաբնակարան շենքերի ընդհանուր թիվը՝ 86, բնակելի առանձնատների ընդհանուր թիվը՝ 1450:

Հողային ֆոնդի և գյուղատնտեսության վերաբերյալ համառոտ տվյալները ներկայացված են աղյուսակ 17-ում:

Աղյուսակ 17.

Բնութագրիչը	Ցուցանիշը
1. Հողեր, ընդամենը (հա)	123380.42
2. Գյուղատնտեսական նշանակության հողեր (հա)	112358,87
3. Բնակավայրերի ընդհանուր տարածքը (հա)	2703.6
4. Խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը	15751.0
5. Մանր եղջերավոր անասունների (ոչխար և այծ) գլխաքանակը	23464.0
6. Խոզերի գլուխաքանակը	2388.0
7. Գյուղատնտեսական տեխնիկա	-
7.1 տրակտորներ (քանակը)	2
7.2 կոմբայններ (քանակը)	-
8. Գյուղացիական տնտեսությունների թիվը	4845.0



Միսիանի համայնքում տնտեսության ծավալում գերակշռողն էլեկտրաէներգիայի արտադրությունն է, որոշակի տեսակարար կշիռ ունեն նաև սննդամթերքի և այլ ոչ մետաղական հանքային արտադրատեսակների արտադրությունները: Համայնքում զարգացած է գյուղատնտեսությունը, որտեղ գերակշռող ծավալը բաժին է ընկնում անասնապահությանը, հացահատիկային մշակաբույսերի և կարտոֆիլի աճեցմանը:

- Էլեկտրաէներգիա արտադրություն փոքր ՀԷԿ-երի միջոցով
- Քարի արատհանում և վերամշակում
- Կաթի և կաթնամթերքի արտադրություն
- Հացի և հացաբուլկեղենի արտադրություն
- Զովացուցիչ ըմպելիքների և պահածոների արտադրություն:

Միսիանի տարածաշրջանը հանրապետությունում հայտնի է եղել հացահատիկային մշակաբույսերի համախառն բերքի և անասնապահական մթերքների արտադրությամբ, որը գերակշիռ դեր ուներ հանրապետությունում: Բնակչության շուրջ 80% զբաղվում է գյուղատնտեսությամբ, բնակչության կողմից մշակվող հողատարածքների չափերը տարբեր են՝ սկսած 100քմ փոքրիկ հողակտորներից, մինչև 25-30հա:

Հիմնական մշակաբույսերն են ցորեն, գարի, հաճար, կարտոֆիլ, կաղամբ և այլ բանջարաբոստանային կուլտուրաներ: Գյուղատնտեսության զարգացման և հողերի արդյունավետ մշակության գործում լուրջ խոչընդոտ է հողերի մասնատվածությունը, որը ավելի ծախսատար և աշխատատար է դարձնում գյուղատնտեսությունը: Քաղաքում գյուղմթերքների վաճառքի շուկայի բացակայությունը բացասաբար է անդրադարձնում ֆերմերային տնտեսությունների արտադրանքի սպառման վրա:

Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների կատարման նպատակով հայցվող հողերը ներկայացված են քաղաքացիների և համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական (արոտավայրեր, «այլ» գործառնական նշանայության), ջրային հողերով:

Երկրաբանական աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությունը ներկայացվել է համայնքի բնակիչներին:

Քննարկվել է աշխատատեղերի ստեղծման, ինչպես նաև ընկերության կողմից համայնքին սոցիալ-տնտեսական աջակցության հնարավոր ծրագրերի հարցը :

**4.3. Պատմության, մշակութային հուշարձաններ**

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքով՝ գնահատման և փորձաքննության գործընթացում դիտարկվող օբյեկտների թվին են պատկանում պատմության և մշակույթի հուշարձանները:

ՀՀ Սյունիքի մարզի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակը հաստատվել է ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2322-Ն և 2007 թվականի մարտի 15-ի թիվ 385-Ն որոշումներով:

Բնունիս բնակավայրի տարածքում հաշվառված են հետևյալ պատմության և մշակութային հուշարձանները.

Աղյուսակ 18.

Հուշարձանը	Ժամանակաշրջանը	Գտնվելու վայրը
1	2	3
ԳԵՐԵՉՍԱՆՈՅ	10-20 դդ.	գյուղի հս եզրին
Խաչքար	12-13 դդ.	
Խաչքար	1331 թ.	
Խաչքար՝ թևավոր	16-17 դդ.	
Տապանաքար	1422 թ.	որմնափակ խաչքարի մոտ
Տապանաքար	1549 թ.	
Տապանաքար	1645 թ.	
Տապանաքար	16-17 դդ.	
Տապանաքար	16-17 դդ.	որմնափակ խաչքարից մի քանի մետր հվ-ամ
Տապանաքար	16-17 դդ.	
Տապանաքար	17 դ.	որմնափակ խաչքարից մի քանի մետր ան
Տապանաքար	1727 թ.	
Տապանաքար՝ Էխանիսի	1604 թ.	
Տապանաքար՝ Խաթունշինի	15 դ.	
Տապանաքար՝ Կարապետ քահանայի	1414 թ.	որմնափակ խաչքարի մոտ
Տապանաքար՝ Մարտիրոսի	1451 թ.	որմնափակ խաչքարից մի քանի մետր ան
ԳԵՐԵՉՍԱՆՈՅ	ուշ միջ-նադար	գյուղի հվ եզրին, բարձունքի վրա, Սբ. Մարիամ Աստվածածին նորաշեն սրբատեղիի մոտ
ԳՅՈՒՂԱՏԵՂԻ ԱՂԱՀԻ	միջնա-դար-20 դ. սկիզբ	գյուղից 2 կմ ամ
Գերեզմանոց	միջնա-դար-20 դ. սկիզբ	
ԳՅՈՒՂԱՏԵՂԻ ՉԱԲԱՉԱՏՈՒՐ (ՉՈՐԲԱ ԾԱՏՈՒՐ)	10-20 դ. սկիզբ	գյուղից 3 կմ ամ, Բնունիս և Թասիկ գյուղերի սահմանագլխին
Գերեզմանոց	10-17 դդ.	«Խաչքարի հանդամաս»-ում
ԳՅՈՒՂԱՏԵՂԻ ՋԱՆՂՈՒԹԱՐԱՆ	10-17 դդ.	
Գերեզմանոց	10-17 դդ.	գյուղից 500 մ հվ-ամ
ԵԿԵՂԵՑԻ ՍԲ. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ	վերա-կառ. 19 դ.	գյուղի մեջ
Գերեզմանոց	14-19 դդ.	եկեղեցուց հվ
Մատուռ «Նահատակի»	19 դ.	եկեղեցուց հվ
Տապանաքար	1559 թ.	գերեզմանոցում, եկեղեցուց 10 մ հվ

1	2	3
Խաչքար	1290 թ.	ագուցված է եկեղեցու ան ճակատին
Խաչքար	1432 թ.	ագուցված է եկեղեցու հվ ճակատին
Խաչքար	1432 թ.	ագուցված է եկեղեցու հվ ճակատին, մուտքից ձախ
Խաչքար	15 դ.	եկեղեցու մկրտության ավազանի խորշում
Խաչքար	15-16 դդ.	ագուցված է եկեղեցու հվ ճակատին, մուտքից աջ
Խաչքար	15-16 դդ.	ագուցված է եկեղեցու ան ճակատին
Խաչքար	15-16 դդ.	ագուցված է եկեղեցու ան ճակատի վերնամասում
Խաչքար	16-17 դդ.	ագուցված է եկեղեցու հս-ան ավանդատան մուտքից վեր
Խաչքար	16-17 դդ.	ագուցված է եկեղեցու ան ճակատին
Տապանաքար	16-17 դդ.	ագուցված է եկեղեցու հվ-ան ավանդատան մուտքից վեր
ՀՈՒՇԱՐՁԱՆ՝ ԵՐԿՐՈՐԳ-ԱՇԽԱՐՀԱՍԱՐՏՈՒՄ ՉՈՂՎԱԾՆԵՐԻՆ	1974 թ.	գյուղի մեջ
Խաչքար	15-16 դդ.	հուշարձանի մոտ, նորաշեն սրբատեղիում


Թասիկ բնակավայրի տարածքում հաշվառված հուշարձանների ցանկը ներկայացված է աղյուսակ 19-ում:

Աղյուսակ 19.

Հուշարձանը	Ժամանակաշրջանը	Գտնվելու վայրը
1	2	3
ԳԵՐԵՉՍԱՆՈՅ	19-20 դդ.	գյուղի հս-ամ եզրին, սարալանջին
ԳՅՈՒՎԱՏԵՂԻ	17-18 դդ.	գյուղից 2 կմ հս-ամ, «Կամնի» և «Տեր Վարդան» լճակների մոտ, «Խազխազ» վայրում
ՀՈՒՇԱՐՁԱՆ՝ ԵՐԿՐՈՐԳ-ԱՇԽԱՐՀԱՍԱՐՏՈՒՄ ՉՈՂՎԱԾՆԵՐԻՆ	1980 թ.	գյուղի ան եզրին, Սիսիան-Թասիկ ճանապարհից աջ

Նժդեհ բնակավայրի տարածքում պատմամշակութային հուշարձաններ հաշվառված չեն:

Երկրաբանական ուսումնասիրության նպատակով հայցվող Գիժգետի երևակման և պատմամշակութային հուշարձաններով զբաղեցրած տարածքների տեղադիրքը, դրանց միջև առկա հեռավորությունը ներկայացված են նկար 15-ում:



Նկար 15.

## 5. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ

### ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Երկրաբանահետախուզական աշխատանքների իրականացման ընթացքում շրջակա միջավայրի վրա դրսևորվող տեխնածին ճնշումների նկարագիրը ներկայացված է ստորև:

#### **5.1. Ազդեցություն մթնոլորտային օդի վրա**

Աշխատանքները սպասարկող ավտոտրանսպորտի տեղաշարժի հետևանքով օդային միջավայր է թափանցում որոշ քանակությամբ փոշի: Հաշվի առնելով մեքենայի միջին արագությունը, ճանապարհի վիճակը, տեղափոխվող բեռը, նախնական գնահատականով առաջանալու է 0.008գ/վրկ փոշի: Հետախուզական առումների անցման ժամանակ կառաջանա առավելագույնը 0.002գ/վրկ փոշի :

#### **5.2. Ազդեցություն ջրային ռեսուրսների վրա**

Երևակման տարածքով հոսող Գիժգետ գետակի ջրերի վա որոշակի ազդեցություն կարող է դրսևորվել աշխատանքների սպասարկող ՄԱՅ 3303 մակնիշի մեքենայով գետերի վրայով անցում կատարելու դեպքում: Այս ազդեցությունը կրում իսիստ սահմանափակ բնույթ, կարճաժամկետ կտրվածքով կատարվելու է ջրի պղտորության ավելացում:

Ջրառ գետերից չի նախատեսվում: Տեխնիկական և խմելու ջուրը գնվելու է շշայցված տարբերակով և երևակման տարածք է բերվելու աշխատանքների սպասարկող մեքենայով :

#### **5.3. Ազդեցություն հողային ռեսուրսների վրա**

Հողային ռեսուրսների ազդեցություն է դրսևորվելու հետախուզական առումների անցման ժամանակ: Կարճաժամկետ կտրվածքով խախտվելու է հողաբուսական շերտը մոտ 336մ<sup>2</sup> տարածքում (7 առու՝ 60մ երկարությամբ և 0.8մ լայնությամբ յուրաքանչյուրը):

Մեքենայի տեղաշարժը իրականացվելու է գոյություն ունեցող դաշտային, բնահողային ճանապարհներով: Նոր ճանապարհների կառուցում չի նախատեսվում:

Երկրաֆիզիկական պրոֆիլավորման ժամանակ աշխատակիցները տեղաշարժվելու են ոտքով, տրանսպորտ այդ աշխատանքների ժամանակ չի կիրառվելու, հետևաբար հողային ծածկույթի վրա ազդեցություն չի առաջանալու:

#### **5.4. Ազդեցություն կենսաբազմազանության վրա**

Երևակման հայցվող տարածքում դիտարկվել են Հայաստանի համար «ֆոնային» հանդիսացող, լայն տարածված մարգագետնային և մարգագետնատափաստանային բուսատեսակներ: Երևակման տարածքը ներկայացված է հիմնականում գյուղատնտեսական նպատակային նշանակության հողերով:

Անտառային բուսականություն հայցվող տարածքում չկա: «Միսիանի անտառտնտեսություն» մասնաճյուղի հողերը գտնվում են հայցվող տարածքից 1.6կմ հեռավորության վրա:

Հայցվող տարածքում չեն նշվել խոշոր կաթնասունների բներ, որջեր, ապրելավայրեր: Կենդանական աշխարհի վրա հնարավոր բացասական ազդեցությունները հիմնականում մեքենայի տեղաշարժից առաջացող աղմուկն է, հողաբուսական շերտի և բուսածածկի կարճաժամկետ խախտումը:

Հայցվող տարածքում ՀՀ բույսերի և կենդանիների կարմիր գրքերում գրանցված բուսական և կենդանական տեսակներ չեն դիտարկվել:

#### **5.5. Ազդեցություն բնության հատուկ պահպանվող տարածքների վրա**

Գիծգետի երևակման տարածքը մասամբ համընկնում է «Զանգեզուր» պետական արգելավայրի տարածքի հետ: Համաձայն ՀՀ կառավարության 15.10.2009թ.-ի N 1187-Ն որոշման հավելված 3-ի՝ արգելավայրի տարածքում մասնավորապես արգելվում է.

- երկրաբանական ուսումնասիրության աշխատանքները (հողային ծածկույթի խախտմամբ), օգտակար հանածոների հանքավայրերի, երևակումների շահագործումը, հանքանյութեր վերամշակող օբյեկտների տեղաբաշխումը.

- ընդհանուր օգտագործման ճանապարհներից և ջրային ուղիներից դուրս շարժիչային և թրթուրավոր տրանսպորտային միջոցների երթևեկությունն ու կանգառը ճանապարհային ցանցի սահմաններից դուրս կամ դրա համար չնախատեսված վայրերում:



Քանի որ պետական արգելավայրի հետ համընկնող տարածքներում հետախուզաառուների անցում չի նախատեսվում, ավտոմեքենայի տեղաշարժ կատարվելու է բացառապես գոյություն ունեցող և բնակիչների կողմից նույնպես օգտագործվող բնահողային ճանապարհներով, ապա պահպանվող տարածքների վրա որևէ ազդեցություն չի նախատեսվում:

#### **5.6. Ընդերքօգտագործման թափոններ**

Հետախուզական առուների անցման ժամանակ հեռացվելու է և փորվածքի անմիջական հարևանությամբ կարճաժամկետ կտրվածքում տեղադրվելու է մոտ 336մ<sup>3</sup> հողաբուսական շերտ:

Համաձայն ՀՀ բնապահպանության նախարարի 2006 թվականի հոկտեմբերի 26-ի N342-Ն և 2015 թվականի օգոստոսի 20-ի N244-Ն հրամանների՝ բաց եղանակով օգտակար հանածոների արդյունահանումից առաջացած փխրուն մակաբացման ապարները հաշվառվել են 34000120 01 99 5 ծածկագրով, իսկ ժայռային մակաբացման ապարները՝ 34000110 01 99 5 ծածկագրով:

Դրանք դասվել են վտանգավորության 5-րդ դասին, այսինքն՝ ոչ վտանգավոր ընդերքօգտագործման թափոններ են:

Սակայն հողաբուսական շերտը ընդերքօգտագործման թափոն համարվել չի կարող, այն հանդիսանում է բնական պաշար, որը կիրառվելու է հետագա ռեկուլտիվացման ընթացքում:

#### **65.7. Պատմամշակութային միջավայր**

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքով՝ գնահատման և փորձաքննության գործընթացում դիտարկվող օբյեկտների թվին են պատկանում պատմության և մշակույթի հուշարձանները:

ՀՀ Սյունիքի մարզի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակը հաստատվել է ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2322-Ն և 2007 թվականի մարտի 15-ի թիվ 385-Ն որոշումներով:

Հայցվող տարածքում պատմամշակութային անշարժ հուշարձաններ հաշվառված չեն, դրանք գտնվում են 5.0-8.7կմ հեռավորությունների վրա:

Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ժամանակ որևէ ազդեցություն պատմամշակութային միջավայրի վրա չի նախատեսվում:

## 5.8. Աղմուկ, թրթռումներ

Նախատեսվող աշխատանքների ընթացքում աղմուկի միակ աղբյուրը ՄԱ3 3303 մակնիշի մեքենան է: Քանի որ մեքենան գտնվում է սարքին վիճակում, անցել է համապատասխան տեխնիկական զննում, ապա առաջացող ձայնային ազդեցությունը գտնվում է նորմատիվ ակտերով սահմանված չափերում:

Աղմուկի ազդեցությունը ազդակիր Արևիս բնակավայրում գնահատելու նպատակով կատարվել են հետևյալ հաշվարկները:

Տեղամասում գումարային հաշվարկային ձայնային բնութագիրը՝  $LA_{էկվ}$  կկազմի է 25դԲԱ:

Աղմուկի մակարդակը աղմուկից պաշտպանող տարածքի հաշվարկային կետում որոշվում է՝

$$LA_{տար} = LA_{էկվ} - \Delta LA_{հեռ} - \Delta LA_{էկր} \text{ անաձևով, որտեղ՝}$$

$$LA_{էկվ} - \text{աղմուկի աղբյուրի ձայնային բնութագիրը, } LA_{էկվ}=35\text{դԲԱ,}$$

$\Delta LA_{հեռ}$  - աղմուկի մակարդակի նվազումը հաշվարկային կետի և աղմուկի աղբյուրի միջև հեռավորությունից կախված,  $\Delta LA_{հեռ}$  կազմում է 10դԲԱ,

$\Delta LA_{էկր}$  - աղմուկի մակարդակի նվազումը էկրանով (նախագծվող բացահանքի տարածք, այլ ընկերությունների կողմից ձևավորված ենթակառուցվածքներ),  $\Delta LA_{էկր} = 10\text{դԲԱ}$ :

Աղմուկի մակարդակը Արևիս գյուղի մոտ կկազմի՝

$$La_{տար} = LA_{էկվ} - \Delta LA_{հեռ} - \Delta LA_{էկր} - \Delta LA_{կանաչ} = 35 - 10 - 10 = 15\text{դԲԱ (նորման } 45\text{դԲԱ):}$$

Հետևաբար, մոտակա Արևիս գյուղի տարածքում, որը գտնվում է հայցվող տարածքից մոտ 3.0կմ հեռավորության վրա, մեքենայի աղմուկը առհասարակ չի լսվելու:

Թրթռումներ չեն առաջանալու, քանի որ աշխատանքների ընթացքում ծանր տեխնիկա չի կիրառվելու, թրթռումների հնարավոր աղբյուր հանդիսացող հորատման կամ պայթեցման աշխատանքներ և այլն, չեն կատարվելու:

Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների համար ՄՆ 245-71սանիտարական նորմերով սանիտարական պաշտպանության գոտի չի սահմանվում:

## 6. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

### *Մթնոլորտային օդի պահպանության միջոցառումներ.*

- Աշխատանքները սպասարկող մեքենայի շարժիչի վառոցքները պետք է լինեն կարգավորված, ինչը կնվազեցնի մթնոլորտ արտանետվող գազերի քանակը;
- մեքենայի տեղաշարժը կատարվելու է բացառապես գոյություն ունեցող բնահողային ճանապարհներով;
- կատարվելու է մթնոլորտային օդում փոշու պարբերական մոնիթորինգ, ստացված տվյալների վերլուծություն:

### *Ջրային ռեսուրսների պահպանության միջոցառումներ.*

- երևակման տարածքով հոսող Գիժգետը և դրա վտակները հատել կամրջակներով, դրանց բացակայության դեպքում՝ ամենանեղ հատվածներով;
- առուները անցնել Գիժգետի հունից և դրա վտակներից նվազագույնը 32մ հեռավորության վրա;
- իրականացնել գետերի ջրերի պարբերական մոնիթորինգ, ստացված տվյալների վերլուծություն:

### *Հողային ռեսուրսների պահպանության միջոցառումներ.*

- հետախուզական առուների անցման ժամանակ հանված հողաբուսական շերտի կուտակում անմիջապես փորվածքի կողքը;
- վերին ճմայի շերտը (մինչև 40սմ խորությամբ) կուտակել առանձին;
- նմուշարկման և փաստագրման աշխատանքներից հետո իրականացնել փորվածքների ռեկուլտիվացիա՝ հանված հողային զանգվածը և մակերևույթին փռելով առանձին կուտակած ճմային շերտը;
- բնական պարարտանյութով (հնեցված գոմաղբ, նախատեսվում է գնել Արևիս գյուղից) պարարտացնել ռեկուլտիվացված տարածքը:

Ռեկուլտիվացիոն աշխատանքների կատարման նպատակով շրջակա միջավայրի պահպանության դրամագլխին ՀՀ կառավարության 21.10.2021թ.-ի N1733-Ն որոշմամբ սահմանված ընթացակարգով կհատկացվի 1500.0հազ.դրամ:

Ռեկուլտիվացիոն աշխատանքների նախահաշվային արժեքների ամփոփ հաշվարկը ներկայացված է ստորև, աղյուսակ 20-ում :

N	Ծախսերի հոդվածները	Չափման միավորը	Գումարը, հազ.դրամ
1	2	3	4
1.	Աշխատավարձ (հետլցում, փխրեցում, պարարտացում)	հազ.դրամ	650.0
2.	Նյութեր	հազ.դրամ	150.0
3.	Տրանսպորտային ծախսեր	հազ.դրամ	50.0
	Ընդամենը	հազ.դրամ	850.0
4.	Անուղղակի ծախսեր	հազ.դրամ	85.0
	Ընդամենը	հազ.դրամ	935.0
5.	Շահույթ	հազ.դրամ	187.0
6.	Չնախատեսված ծախսեր	հազ.դրամ	378.0
	<b>Ընդհանուրը</b>	հազ.դրամ	<b>1500.0</b>

- Երևակման տարածքի հողաբուսական շերտի պարբերական մոնիթորինգ՝ հողերի քիմիական կազմի, կատիոնափոխանակման հատկությունների և հումուսի պարունակության, նավթամթերքների առկայության ուսումնասիրության համար;
- աշխատանքների ժամական օգտագործվող մեքենայի տեխնիկական սպասարկում Միսիանում, համապատասխան ծառայություններ մատուցող կազմակերպություններում: Տեխնիկական զննում յուրաքանչյուր շաբաթ՝ աշխատանքների վայր մեկնելու առաջ, ինչը թույլ կտա գրեթե զրոյի հասցնել տարածքը նավթամթերքներով աղտոտելու հնարավորությունը:

***Կենսաբազմազանության պահպանության միջոցառումներ.***

- վաղ գարնանը, սողունների ակտիվության շրջանում աշխատանքների իրականացման գրաֆիկով նախանշված տարածքներից սողունների հավաք և վերաբնակեցում անվտանգ հատվածներ;
- տարածքների ռեկուլտիվացում՝ հանված ճմային շերտի կիրառմամբ, բնական լանդշաֆտի վերականգնման նպատակով;
- երկրաբանահետախուզական աշխատանքների ժամանակ անօրինական որսի բացառում;
- աշխատանքներին ներգրավված անձնակազմի ուսուցում՝ իրազեկում շրջանում հայտնի ՀՀ բույսերի և ՀՀ կենդանիների գրքերում գրանցված տեսակների վերաբերյալ;
- սպասարկող մեքենայի շարժիչի կարգավորում, աղմուկի մակարդակի վերահսկողություն;

- ՀՀ կառավարության 31.07.2014թ.-ի թիվ 781-Ն որոշմամբ սահմանված դեպքերում՝ ըստ կիրառելիության, բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության միջոցառումների իրականացում: Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության ներկայացնելիս ընկերության կողմից գործունեության հայտում և հետագայում՝ գնահատման հաշվետվության մեջ ներառվում և հետագայում իրականացվում են վայրի բուսատեսակների և դրանց պոպուլյացիաների վիճակի ուսումնասիրություն (տեսակային կազմ, տարածվածություն, քանակ), որի տվյալները սահմանված կարգով տրամադրվում են բուսական աշխարհի պահպանության, պաշտպանության, օգտագործման և վերարտադրության բնագավառում լիազորված պետական մարմին):

Հոդերում Հայաստանի Հանրապետության բույսերի Կարմիր գրքում գրանցված բուսական տեսակի նոր պոպուլյացիաների հայտնաբերման դեպքում դրանց պահպանության նպատակով ընկերությունը պարտավորվում է իրականացնել հետևյալ միջոցառումները՝

1) առանձնացնել օգտագործման նպատակով տրամադրված տարածքում պահպանվող գոտիներ, որոնք ունեն տեղական նշանակություն և անհրաժեշտ են կարմիր գրքում գրանցված բուսատեսակների՝ սույն կետում նշված նոր պոպուլյացիաների կենսունակության ապահովման նպատակով.

2) ժամանակավորապես սահմանափակել առանձնացված պահպանվող գոտիներում տնտեսական գործունեության որոշ տեսակներ, եթե դրանք կարող են բերել նշված բուսատեսակների աճելավայրերի վիճակի վատթարացմանն ու պոպուլյացիաների կենսունակության խաթարմանը.

3) սույն կետի 1-ին և 2-րդ ենթակետերում նշված միջոցառումների իրականացման անհնարինության դեպքում կարմիր գրքում, որպես տվյալ բույսի աճելավայր չգրանցված տարածքներից, բույսերի բնական վերարտադրության նպատակով տեղափոխել բույսերի առանձնյակները տվյալ տեսակի համար նպաստավոր բնակլիմայական պայմաններ ունեցող որևէ բնության հատուկ պահպանվող տարածք կամ բուսաբանական այգիների տարածք, կամ կարմիր գրքում որպես տվյալ բույսի աճելավայրեր գրանցված որևէ տարածք, իսկ բույսերի սերմերը

տրամադրել համապատասխան մասնագիտացված կազմակերպությանը՝ գենետիկական բանկում պահելու և հետագայում տեսակի վերարտադրությունը կազմակերպելու նպատակով:

- յուրաքանչյուր օր առաջացող կենցաղային աղբի (սննդի մնացորդ, թուղթ, պոլիէթիլենային տոպրակներ, պլաստմասե տարաներ) հավաքում անթափանց տոպրակների մեջ, աղբի տեղափոխում Միսիանի գործող աղբավայրեր;
- «Զանգեզուր» պետական արգելավայրի հետ համընկնող տարածքներում հետախուզական աշխատանքների իրականացում քարտեզագրման և երկրաֆիզիկական մեթոդներով (մագնիսահետախուզություն և հարուցված բևեռացման մեթոդով էլեկտրոհետախուզում)՝ բացառելով հետախուզական փորվածքների անցումը և հողային ծածկույթի խախտումը;
- բուսածածկի և կենդանական աշխարհի պարբերական մոնիթորինգ:

***Ընդերքօգտագործման և արտադրական թափոններով աղտոտման կանխարգելում.***

- ընդերքօգտագործման թափոններ չեն առաջանալու :

***Պատմամշակութային հուշարձանների պաշտպանություն.***

Երևական հայցվող տարածքում պատմամշակութային հուշարձաններ ՀՀ կառավորության կողմից հաշվառված չեն: Աշխատանքների ընթացքում նախատեսվում է կիրառել պատահական գտածոների ընթացակարգ, հետևյալ միջոցառումների իրականացման միջոցով.

- համապատասխան անձնակազմի և պայմանագրով աշխատողների ուսուցում պատահական հնագիտական գտածոների ճանաչման, դրանց հետ վարվելակերպի և արձագանքի ուղղությամբ;
- գտածոների ուսումնասիրություն հրավիրված հնագետների կողմից, որպեսզի վերջիններս ուղղորդեն հնագիտական գտածոների ճանաչման և արձագանքման գործընթացը,
- արձանագրությունների կազմում պատահական գտածոներին արձագանքելու համար, ներառյալ աշխատանքի ժամանակավոր դադարեցումը գտածոների հայտնաբերման վայրում;
- պետական մարմինների ծանուցում,



- պատահական գտածոների գնահատման և պեղումների արագացված ընթացակարգերի կիրառում, ազդեցությունների սահմանափակման համար, միաժամանակ նվազեցնելով շահագործական աշխատանքների ուշացումները:

***Աշխատակիցների կենցաղային պայմանների սպաստում.***

Աշխատակիցները բնակվելու են հարակից բնակավայրերում՝ վարձակալված տներում, որտեղ առկա են բոլոր անհրաժեշտ կենցաղային պայմանները:

Աշխատանքները սպասարկող մեքենայի թափքում նախատեսվում է պահել դաշտային ծավվող սեղան, աթոռնեկ, վրան՝ հանգստյան ժամերին և սնունդ ընդունելու համար հարմարավետ պայմաններ ստեղծելու համար:

***Սողանքային մարմիններ.***

- Սողանքային մարմինների ակտիվության ուսումնասիրության նպատակով կոորդինատային կապակցմամբ ռեպերների տեղադրում և դրանց տեղադիրքերի մոնիթորինգ՝ շաբաթը մեկ անգամ պարբերությամբ;
- սողանքների տարածքում աղբյուրների, ջրահոսքերի առկայության ուսումնասիրություն և կոորդինատային կապակցում աշխատանքային քարտեզների հետ:

Տնտեսական վնաս.

***Շրջակա միջավայրին հասցվող վնասը.***

Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների արդյունքում շրջակա միջավայրին հասցվող վնասը կապված է հետախուզական առուների տարածքում (336մ<sup>2</sup>) հողային շերտի խախտման հետ: Այդ ազդեցությունը կրում է սահմանափակ և կարճատև բնույթ, քանի որ նմուշարկման և փաստագրման աշխատանքներից հետո կատարվելու է հողերի վերականգնում (ռեկուլտիվացիա): Ռեկուլտիվացիոն (հողային ծածկույթին հասցված վնասի վերացման) աշխատանքների արժեքների հաշվարկը ներկայացված է աղյուսակ 20-ում:

## 7. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԾՐԱԳԻՐ

«ՍԱԽԱԷԼ» ՍՊ ընկերության կողմից Գիծգետի երևակման տարածքում նախատեսվում է իրականացնել շրջակա միջավայրի աղտոտվածության մոնիթորինգ՝ ՀՀ կառավարության 2018 թվականի փետրվարի 22-ի N191-Ն որոշման պահանջներին համապատասխան: Կատարվելու է մակերևութային ջրերի որակի ուսումնասիրություն, մթնոլորտային օդի դիտարկում, հողային ծածկույթի զննություն, ինչպես նաև երևակման տարածքի և հարակից շրջանի կենսաբազմազանության դիտարկում:


Ստորև, աղյուսակ 21-ում ներկայացված են երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ազդեցության վերահսկման նպատակով կատարվելիք բնապահպանական մոնիթորինգի հիմնական ցուցանիշները:

Աղյուսակ 21.


Մոնիթորինգի ենթակա պարամետրերը	Մոնիթորինգի վայրը	Ազդեցության դրսևորման հիմնական աղբյուրները	Մոնիթորինգի տեսակը
1	2	3	4
Անօրգանական փոշի	Երևակման տարածք, աշխատանքների իրականացման վայրեր, ճանապարհներ	Հետախուզական առուների անցում, մեքենայի տեղաշարժ	Նմուշառում, նմուշի լաբորատոր հետազոտություն, շաբաթական մեկ անգամ՝ 24 ժամ տևողությամբ
Հողային ռեսուրսներ	Երևակման տարածք, աշխատանքների իրականացման վայրեր	Աղտոտում նավթամթերքներով մեքենայի տեղաշարժի հետ կապված	Նմուշառում, նմուշի լաբորատոր հետազոտություն, ամսական մեկ անգամ
Բաց ջրավազաններ	Գիծգետ	Պղտորություն, նավթամթերքներ մեքենայի տեղաշարժի հետ կապված	Նմուշառում, նմուշի լաբորատոր հետազոտություն, շաբաթական մեկ անգամ
Բուսական ծածկ և կենդանական աշխարհ	Երևակման տարածք	Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքներ	Դիտողական զննում, երթուղիներ, ֆոտոթակարդներ, հետքերի, սննդի մնացորդների և էքսկրեմենտների զննում, տարեկան մեկ անգամ

Կատարվելու է նաև սողանքային մարմինների ակտիվության դիտարկում:

Նկար 16-ում ներկայացված են շրջակա միջավայրի վրա դրսևորվող ազդեցությունների մոնիթորինգի դիտակետերի նախնական տեղադիրքը, նկար 17-ում սողանքային մարմինների ակտիվության վերահսկման դիտակետերի տեղադիրքը:



Նկար 16.



Նկար 17.

## 8. ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐ

«ՍԱԽԱԷԼ» ՍՊԸ-ի արտակարգ իրավիճակները կարող են պայմանավորված լինեն հետևյալ գործոններով.

i. երկրաշարժ՝ հաշվի առնելով, որ հանրապետության տարածքը գտնվում է սեյսմիկ ակտիվ գոտում,

ii. սողանքային երևույթներ, հաշվի առնելով որ հայցվող տարածքում համաձայն Հայաստանում սողանքների տեխնիկական տեղեկագիրը (Միջազգային համագործակցության Ճապոնական գործակալություն, ՀՀ քաղաքաշինության նախարարություն, 2005) հաշվառված են սողանքային մարմինները:

iii. հրդեհներ՝ կապված մարդածին գործոնների հետ:

Նախատեսվում է մշակել երկրաշարժերի դեպքում գործողությունների պլան՝ վտանգավոր տարածքներից աշխատակիցների ապահով տարահանումն իրականացնելու նպատակով: Անվտանգության տեխնիկայի կանոնների վերաբերյալ հրահանգավորում իրականացնելու ժամանակ առանձին ներկայացվելու են նաև երկրաշարժերի ժամանակ աշխատակիցների պահվածքի կանոնները, գործողությունների հաջորդականությունը:

Սողանքային մարմինի ակտիվացման նախանշաններ արձանագրելու դեպքում անհրաժեշտ է.

- տարահանել տարածքում գտնվող բոլոր աշխատակիցներին,
- սողանքի ակտիվացման վերաբերյալ իրազեկել սողանքին հարակից հատվածում գտնվող Արևիս բնակավայրի վարչական ղեկավարին,
- սողանքի ակտիվացման վերաբերյալ իրազեկել տարածքային կառավարման մարմիններին և ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությանը:

Հրդեհային անվտանգությունն ապահովելու համար աշխատակիցները տեղեկացվելու են հրդեհային անվտանգության կանոնների մասին: Մեքենայում նախատեսվում է պահել կրակմարիչ:

«ՍԱԽԱԷԼ» ՍՊԸ-ի կողմից հայցվող տեղամասի տարածքում կնախատեսվի համապատասխան հաղորդակցման համակարգ (ինֆորմացիոն և շարժակալ կապ), որով հնարավոր է արտակարգ իրավիճակների ժամանակ կապ հաստատել ձեռնարկության վարչական կազմի, տեղական ինքնակառավարման մարմինների, շտապ օգնության և փրկարար ծառայության հետ:

## ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. ՀՀ Շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի հրապարակումներ
2. Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության հրապարակումներ
3. Հայաստանի ազգային ատլաս: Հատոր Ա
4. Почвы Армянской ССР. Ред./ Р.А. Эдилян, Г.П. Петросян, Н.Н. Розов. Ереван: “Айастан”, 1976 г.
5. Հայաստանի բույսերի Կարմիր Գիրք.– 2010թ.
6. Հայաստանի կենդանիների Կարմիր Գիրք.– 2010թ.
7. “Растительность Армянской ССР”. Магакьян А.К.
8. “Флора, растительность и растительные ресурсы Армении”, Институт ботаники НАН РА Армянское ботаническое общество. Ереван
9. “Дикорастущие съедобные растения Армении”. А.П. Тер-Восканян, Ученые записки Ереванского государственного института.
10. “Цветущие уголки биоразнообразия”, FAO, <http://www.fao.org/3/i1687r/i1687r08.pdf>
11. “Деревья и кустарники Армении в природе и культуре”. Ж.А. Варданян, 1952
12. Животный мир Армянской ССР. Даль С.К, 1954
13. ՀՀ Սյունիքի մարզպետարանի պաշտոնական կայք
14. Միսիանի համայնքապետարանի պաշտոնական կայք



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ  
ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ  
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

« 16 » 06 2022թ.

№ 02/11.1.2/3854-2022

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՆԴՐԱՆԻԿԻ ՓՈՂՈՑԻ  
82-ՐԴ ՇԵՆՔԻ 15-ՐԴ ԲՆԱԿԱՐԱՆԻ ԲՆԱԿԻՉ  
ԽԱՉԻԿ ԷԼՈՅԱՆԻՆ

Ի պարասխան Ձեր 09.06.2022թ. դիմումի

Հարգելի՛ պարոն Էլոյան,

Ներկայացնում եմ Սյունիքի մարզի Սիսիան համայնքի Արևիս բնակավայրից 8 կմ հարավ ընկած Ձեր կողմից նշված կտորդինատներով տեղամասի սողանքավտանգ գոտիների վերաբերյալ քարտեզները:

Առդիր՝ 2 նիշք:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

6/15/2022



ԼԻԼԻԹ ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ

Signed by: MIRZAKHANYAN LILIT 6107860169

ԼԻԼԻԹ ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ

Կարարող՝ ԱԻՆ ՓԾ ԲՊԱՈՒՆ վարչություն  
փ/ծ փոխգնդապետ Անահիտ Դավթյան  
Հեռ.՝ 012-31-78-35









Սյունիքի մարզի Սիսիան համայնքի Արևիս բնակավայրից 8 կմ հեռավորության վրա գտնվող տարածքի սողանքավտանգ գոտիների քարտեզ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ԿԱԴԱՍՏՐԻ ԿՈՄԻՏԵ

ՏԵՂԵԿԱՆՔ

ԳՈՒՅՔԻ ԱՌԱՆՁԻՆ ՈՐԱԿԱԿԱՆ ԶԱՆԱԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԻ ԵՎ ԴՐԱ ՆԿԱՏԱՍԱՐ  
ԱՌԱՆՁԻՆ ԻՐԱԿՈՒՆՔՆԵՐԻ (ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԻ) ԿԵՐԱՔԵՐՅԱԼ

10/06/2022թ.

N ԱՏ-10062022-09-0717

գաղտնաբառ՝ 97E4FA8WHYPE

Դիմող՝

**ԽԱԶԻԿ ԷԼՈՅԱՆ ՎԱԶՍԳԱՆԻ**

ԵՐԵՎԱՆ, ՄԱԼԱԹԻՎ-ՍԵՐԱՍՏԻՎ, ԱՆԴՐԱՆԻԿԻ Փ., 82Ծ, 15ԲՆ

**Ի պատասխան Ձեր 08/06/2022-1-0054 դիմումի** համաձայն հաշվառման տվյալների մուտքագրման բաժնի եզրակացության դիմումում նշված կոորդինատները ներառող տարածքում մարզ Սյունիք, համայնք Սիսիան Արևիս գյուղում պետության կողմից հատուկ պահպանվող տարածքներ չկան:

**Տեղեկանքը կազմվել է Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի Սյունիքի մարզային ստորաբաժանման անշարժ գույքի ռեգիստր Մերի Դավթյանի կողմից**

\*Սույն տեղեկանքը հաստատված է էլեկտրոնային եղանակով՝ տեղեկանքը կազմող պաշտոնատար անձի կողմից: